№ 204 ՇԱԲԱԹ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 204

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամենվզով,

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊԻ

ՄՇԱԿ

ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaktion du journal „MSHAK".

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պիտիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Դ-ր Ռ. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Петербургում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնայում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՂԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Вышла изъ печати и поступила въ продажу книга

Положеніе о размежеваніи Закавказскаго Края

II изданіе, исправленное и значительно дополненное новѣйшими разъясненіями и приложеніемъ закона 26 мая 1897 г. о мѣрахъ къ ускорѣнію межеванія.
Составилъ К. В. ДОЛГОВЪ, членъ Тифлисской Судебной Палаты.
Цѣна I руб. 50 коп.
Складъ изданія въ Центральной Книжн. Торговлѣ (Тифлисъ Головин. пр.).
(о.-м.) ат. 666. 5—5

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ից ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱԾ ՎԵՐՋԸ 4 ՐՈՒԲԼԻ։

Սեպտեմբ. 1-ից մինչև հոկտ. 1-ը 85 կ.։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակատրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. հուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

ՄԵԾ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

—

Երէկ մենք ստացանք Մոսկվայից Լմ. Ք. Նազարեանից հետեւեալ հեռագիրը.

«Ռուսական պետութիւնները մի նոտա (յիշատակագիր) կը յանձնեն Բ. Դռան, որի մէջ շեշտված է անհրաժեշտութիւնը վերահաստատել կարգ և անդորրութիւն Հայաստանում»։

Այս հեռագիրը Զէկ մանրամասնութիւններ չէ պարունակում, բայց ցոյց է տալիս, որ Բերլինի դաշնագիրը ստորագրող մեծ պետութիւնները [illegible] ցել են անհրաժեշտութիւնը՝ դիմումներ անել Թիւրքաց կառավարութեան և պահանջել, որ Հայաստանում կարգ և անդորրութիւն հաստատվի։

Պէտք է յուսալ, անշուշտ, որ մեծ պետութիւնները, երկարամեայ փորձերով համոզված, թէ պատօնական դիմումները ոչ մի արդիւնք չեն ունենայ, ինչպէս չեն ունեցել մինչև այսօր, կը գտնեն միջոց և հնարաւորութիւնը՝ ստիպել Բ. Դռան այս անգամ այլ ևս չը խաբել խոստումներով, այլ, իրապէս, մտցնել Հայաստանում բէֆորմեր և այնպիսի կարգուկանոն, անշուշտ մեծ պետութիւնների կոնտրոլի ներքոյ, որ այլ ևս քիւրդը, թիւրքը չը համարձակվեն կոտորածներ, կողոպուտներ կատարել և իմանան, որ այդպիսի դէպքերում սոսկալի պատիժների կենթարկվեն։

Կ. Պոլսից ստացված թերթերը ցոյց են տալիս, որ թէ Թիւրքիայում, թէ Բոլգարիայում և թէ Եւրոպայում բողոքի ժողովներ են լինում։ Բողոքել է պաշտօնապէս և պատրիարքը, յանուն ամբողջ հայ ազգի։ Բողոքի ձայներ պէտք է բարձրացնեն, ինչպէս անցեալ անգամ շեշտեցինք, բոլոր երկիրների հայերը օրինական ճանապարհով, զգուշանալով սակայն, որ բողոքները չը համարվեն յեղափոխականների ագիտացիայի արդիւնք։

Մենք նոյն իսկ իրանց՝ յեղափոխականներին և մասաւանդ դաշնակցականներին յորդոր կարդացինք յանուն Թիւրքիայի բարգաւաճման հայ ժողովրդի փրկութեան՝ ձեռնպահ մնալ, նախաձեռնող չը լինել, այլ թողնել, որ հայ ժողովուրդը ինքն հանդէս գայ իր ահաւոր, համաժողովրդական և ոչ կուսակցական բողոքներով։ Փորձը, դառն փորձը ցոյց է տուել, որ թէ պետութիւնները, թէ եւրոպական հասարակական կարծիքը զլացել են իրանց լուրջ ուշադրութիւնը դարձնել հայոց հարցի վրա, ամեն անգամ, երբ նկատել են կուսակցական ագիտացիա, կուսակցական և ոչ ժողովրդական շարժումներ։

Մեր կարծիքով, պէտք է շարժվեն և Ռուսաստանի հայերը ու իրանց բողոքը, ձայնը լսելի անել տան ռուսաց կառավարութեան միջոցով։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
13 սեպտեմբերի

Կոպենհագէն.—Այրի Կայսրուհի Մարիա Ֆէոդորովնան այցելեց «Միւրիկ» յածանաւը։ Մովակալ Հեսսէնը Կայսրուհուն դիմաւորեց։

—

Վիէննա.—Աւստրիական պատգամաւորութեան մասնաժողովի մէջ իշխան Շվարցենբերգ, քննելով արտաքին գործերի մինիստրութեան բիւջէն, յայտնեց՝ թէ Ռուսաստանի հետ բարի յարաբերութիւնները պահպանելը անպայմանապէս անհրաժեշտ է խաղաղ զարգացմանը։ Սերբիայի նկատմամբ իշխանը կարծում է, որ Բալկանում տիրող արդի կացութիւնը կարող է ընդունել ճգնաժամի բնաւորութիւն անկախ Աւստրիայից և առանց նրա մեղսակցութեան։ Վերջին դէպքում Աւստրիայի համար հազիւ թէ հնարաւոր լինի ընթանալ խաղաղութեան շաւղով։ «Մենք—ասաց հռետորը,—չենք կարող թոյլ տալ, որ Սերբիան տերբիտորիալ նուաճումներ անէ, զբաղեցնելով մեզ օտար սերբական հողով։ Մենք չենք ցանկանում որևէ կերպ ընդլայնել մեր երկիրը և խաղաղութիւն ենք ուզում։ Բայց եթէ վերջինը չը խախտվի, այն ժամանակ մենք հարկադրված կը լինենք կռուել մեր ոյժերը և շահերը»։

Պատասխանելով Էլինբօգէնի հարցին՝ թէ ինկատի ունի, արդեօք, կառավարութիւնը զինուորական միջամտութիւն գործել Թիւրքիայի գործերին և փոխել Թիւրքաց երկրի սահմանները՝ Բերհտոլդը յայտնեց, թէ նա դեռ առաջին հաղորդագրութեան մէջ ապրիլ ամսում խօսեց յօգուտ առաջնութեան սկզբունքի, ուստի և նա պէտք է զարմանք արտայայտէ Էլինբօգէնի ենթադրութեան առիթով՝ թէ մինիստրը կարող է հեռևել պատերազմի քաղաքականութեանը։ Նա կարող է Էլինբօգէնի հարցին պատասխանել սոսկ բացասաբար։

«Նէյէ-Ֆրէյէ-Պրեսսէն» մեծ նշանակութիւն է տալիս աւստրիական և ունգարական պատգամաւորութիւնների տեղեկաբերների միաբանութեանը։ Լրագիրը եզրակացնում է, որ Բերհտոլդը, ինչպէս նաև երկու պատգամաւորութիւնները, համակարծիք են համոզման—թէ Աւստրիայի և Ռուսաստանի համաձայնութիւնը հանդիսանում է խաղաղութեան լաւագոյն գրաւական։ Աւստրո-Ունգարիայի քաղաքականութիւնը ոչ մի այնպիսի ցանկութիւն չունի, որ ընդունակ լինի ստեղծել անհաշտելի տարաձայնութիւն Ռուսաստանի հետ։ Աւստրո-Ունգարիայի մեղքը չի լինի եթէ աւստրո-ռուսական համաձայնութիւնը անիրագործելի մնայ։

—

Հռոմ.— Գումարվեց մինիստրների արտակարգ խորհուրդ, ուր ընդունվեցին կարևոր վճիռներ։

Բոգոսում նաւերը լցված են իտալական զօրքերով Թիսսի դէմ գործողութիւններ սկսելու համար։

—

Կ. Պոլիս.—Երկրագործութեան մինիստր Բէշիդ փաշան մեկնեց Լօզանն տանելով պատասխան իտալական առաջարկութիւնների դէմ։

Սամսոն ուղարկվեցին 600 թիւրք զինուոր։

—

Աթէնք.— Սամոսի իշխանութեան խորհրդի անդամները դիմեցին հովանաւորող պետութիւններին միջնորդելով օգնութեան հասնել, թենվեալ իրանց արտօնութիւնները երաշխաւորած մեծ պետութիւնների մեծահոգութեան վրա։

Հելլէնական կառավարութիւնը յանձնարարեց իր դեսպանին ներկայանալ Բ. Դրանը, յայտնել կարուկ բողոք, պահանջել օսմանեան կառավարութիւնից անհրաժեշտ բացատրութիւններ թիւրք զօրամասի Սամսոն կղզում յունական «Էգօ» նաւի վրա յարձակում գործելու առիթով, պահանջել բերանացի նոտայով խիստ պատիժ յանցաւորներին, և որ օսմանեան կառավարութիւնը ցաւ յայտնէ եղածի մասին ու հատուցանէ յունական նաւի վնասները։

—

Բերլին.—«Ֆոսիշէ Ցայտունգի» ասելով աւստրո-բուլգարական համաձայնութիւնը միանգամայն ապահովում է ամեն տեսակ պատահականութիւններից։ Պաշտօնապէս հաղորդվում է, որ կառավարութիւնը վճռել է միջոցներ ձեռք առնել մսի պակասութեան դէմ։

—

Լօնդոն.—Հեռագրում են, որ Եապոնիայում տայֆունը սոսկալի աւերածութիւններ է գործել։ Յօկիոն համարեա երկու ամբողջ օր կորված է դրսի աշխարհից։

—

Վուչան.—Ապստամբվեցին 2000 զինուոր։ Նրանց միացան հեծեալ զինուորները։ Քաղաքային բաց դռները մնացին։ Ապստամբի և տեղն ու տեղը գընդակահարեցին։ Բռնեցին կրկին 200 հոգու և նոյնպէս գնդակահարեցին։ Մնացածները փախան։

—

Նիկարագուա.—Լէօնում մորթվեցին 29 ամերիկական ծովային զինուորներ, որոնք սպանել էին 40 ապստամբների։ Հիւսիսամերիկական ծովային զօրքերը գրաւել են Գրօնադու նահանգը։ Ապստամբների պարագլուխը գերի է ընկել։

—

Մադրիդ.—Բարսէլօնա ուղարկվեցին զօրքեր։ Գնացքները երթևեկում են զինուորների օգնութեամբ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
13 սեպտեմբերի

Թէհրան.— Միութիւն կուսակցութիւնը հրատարակել է մուշտայիդների և բախտիարների պարագլուխների հեռագիրը, որով կառավարութիւնից պահանջվում է վերականգնել սահմանադրութիւնը և անյապաղ գումարել մէջլիսը։

—

Թէհրան.— Պետերբուրգի նախկին հաւատարմատար Ալի-Ղուլի-խանը նշանակվեց արտաքին գործերի մինիստրի օգնական։

—

Խօյ.—Համադանի մօտերը սօմայեան քիւրդերը կողոպտեցին թաւրիզից եկած պօստը, յափշտակելով 500 բուբլի և սպանելով պօստատարին։

Մակուի խանութեան մէջ գտնվող Մարաղայում և Զայիտարում կենտրոնացած են Մակուի-խանի ձիաւորները և միլիմանեանի քիւրդերը Աքբէր-խան սարդարի ազգականի ձիաւորների դէմ կռուելու համար։ Ներքին երկրպտռակութիւնները սպառնում են ընդունել լուրջ չափեր։

—

Խօյ.—Աւազակ Բէշէր-աղան նորից երևաց Խօյի շրջակայքում։

Պարսից կառավարութեան կարգադրութեամբ կախաղան բարձրացրին Մուզաֆէր-Էդդինին, որ մասնակցել էր հիւպատոսական դուլամի հօր սպանութեանը։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
13 սեպտեմբերի

Կ. Պոլիս.—Մալիսորների հետ Վատիի մօտերը սկսված կռիւը տևեց երկու օր ու գիշեր։ Ապստամբները յետ մղվեցին։

—

Սօֆիա.—Խամամբունար կոչված պահակատեղում թիւրքերի հետ ունեցած կատաղի հրացանաձգութեան մէջ, մասնաւոր տեղեկութիւնների համաձայն, սպանվել է մի բոլգար։

—

Ուսկիւբ.—Սկիւտարի հետ հաղորդակցութիւնը ընդհատված է։ Սլբան կաթոլիկները գրաւելով ճանապարհները, սպառնում են Սկիւտարին։ Ենթադրվում է, որ Բերհտոլդի առաջարկութեան, կաթոլիկ պատգամաւորների ս. հաղորդութեան կոնգրէսին մասնակցելու և մալիսորների ապստամբութեան միջև կապ կայ։ Պատգամաւորները Վիէննա եկան Աւստրիայի հաշվին։ Իշխանութիւնները զգուշում են ալբանմահմէդականներին կաթոլիկների դէմ։

—

Բելգրադ.—Սէնիցից սերբական հողը անցան 300 սերբ, ազատվելով թիւրքերի հալածանքներից։

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

—

Մերսին, 22 օգոստոս

Եթէ քաղաքական կացութիւնից ծանը փորձութիւններու չհանդիպեցաւ Կիլիկիոյ մէջ, ասիկա ըսել չէ թէ հայութեան վիճակին սպառնացող խնդիրներ չունեցանք։

Խնդիրներ ծագեցան մասնաւորապէս Լեռնային Կիլիկիոյ երկու կարևոր հայաբնակ կեդրոններու մէջ, Հաճընի և Զէյթունի, ուր ծանր դէպքեր պիտի կընային ծագիլ, եթէ թեանց ու մեծամեծներուն զգուշաւոր ընթացքը և միւս կողմէն պետութեան այլուր շատ մը կենտրոնութիւններով զբաղած ըլլալը։

Խնդրոց սկզբնապատճառը ծանօթ ցաւմն է—զինուորական խնդիրը—որուն ստեղծումը որքան դիւրութեամբ եղաւ, հետևանքին ուր և ինչպէս հասնիլ հնար չէ այժմէն նախատեսել։ Մեր յոխորտ մերուսներու ահպարարական շտապումով մը և առանց մտածութեան մէջտեղ դրած այդ խնդիրը, յայտնի է թէ, նոյնքան դիւրութեամբ ընդունուեցաւ երիտասարդ թիւրք կառավարութենէն՝ իբր մէկը լաւագոյն զէնքերէն՝ քրիստոնեայ ազգութիւնները հարուածելու և տկարացնելու համար։

Սկզբունքով ոչ ոք կընայ հակառակիլ քրիստոնէից ևս զինուորագրութեան գաղափարին, որ իսկամ տիրապետող տարրին դարաւոր առանձնաշնորհեալ ուժեղ դիրքը խախտող կարևոր ազդակներէն կըլլար։ բայց որոշ պայմաններով։

Զինուորագրութեան խնդրոյն մէջ քրիստոնէից մասնայատուկ պայմանները աչքի առաջ չբերելով է, որ մեր կուսակցական մերուսներն իրենց կռնակին պիտի կրեն զինուորական խնդիրէն ծագած բովանդակ դժբաղդութեանց մեղքը, թէև այդպիսի նեռուն համար պատասխանատուութիւն ըստուած բանը գոյութիւն ունեցած չըլլայ, ինչպէս չէ եղած զինուորական խնդիրէն այլապէս տարբեր և փափուկ ձեռնարկութեանց մէջն իսկ։

Քրիստոնեայ զինուորները չտոկալով բանակին մէջ իրենց իսկամ ընկերակցաց և սուորատիճան պետերուն բիրտ վարմունքներուն և անտանելի վերաբերումին՝ կը ձգեն կը փախչին, ինչպէս շատ ուրիշներ ալ, առանց ճաշակելու զինուորութիւնը, կը թողուն երկիրը, իրենց ծնողքը և կը հեռանան օտար երկիրներ։

Արդ Հաճընի, և Զէյթունի փախստականները գլխաւորաբար կազմուած են զինուորական փախստականներէ։

Զէյթունի մէջ կառավարութիւնը, գոնէ հիմակու

դերձ, ամենևին երաշխաւորութիւն չէ տալիս նրա յարատևութեան մասին։

Դէհ, գիտենք արդէն, որ էլեքտրաքարշը մի հասարակական հաստատութիւն է, և նրա ծառայողները միշտ էլ յարաբերութեան մէջ են լինում ժողովրդի հետ։ ապա ուրեմն և սրանք որոշ չափով պէտք է «ընտրովի» լինեն. իսկ այդ կարող է իրականութեան մօտենալ այն դէպքում, երբ նրանց դրութիւնը գոնէ մի փոքր բարեփոխված կը լինի, որը՝ թւում է ինձ, երբէք ձեռնտու չէ ընկերութեանը, հետևաբար և բոլորովին էլ չէ մտածում այդ մասին։ Եւ որպէս այդ չկամութեան հետևանք, տեսնում ենք, որ օր ըստ օրէ ոտնձգութիւններ է գործ դնում նրանց իսպառ իրաւազուրկ դարձնելու համար։

Մենք տեսնում ենք, որ ընկերութիւնը մեծ մասամբ չնչին օրավարձով վարձում է այնպիսի խակ և անաշ մարդիկ, որոնք տարբերական քաղաքավարութիւնից զուրկ լինելով՝ ընդունակ են լինում երթևեկողներին յաճախ սկանդալների ապացոյցներ տալ։ իսկ լաւագոյն բացառութիւններին ընկերութիւնը ինքն է իր տակտիկայով կլեուզնիկութեան դասեր տալիս։

Օրինակ, յաճախ լսել եմ, որ վերահսկիչներից աւելի սիրելի և յարգելի են նրանք, որոնք ընդունակ են ամենաղատարկ պատճառներով արձանագրութիւններ կազմել։ իսկ նրանք, որոնք անշնորհք են նման կեղծիքների, այդպիսիք համարվում են ապիկարներ, գործի անընդունակ մարդիկ՝ և արժանանում «առաջին նախազգուշութեան»։

Ազատագրական տարիներում որոշ չափով նրանց դրութիւնը բարեփոխվեց, սակայն երբ ըեակցիան նորից գլուխ բարձրացրեց, անօնիմ ընկերութեան ծառայողների դրութիւնը նորից վատթարացաւ։ Ընկերութիւնը ամեն հնարաւոր միջոցներ ձեռք առաւ և, իր հին ըեժիմն ու պայմանները օրէնք դարձնելով, ամենաղատարկ առիթներով հեռացրեց իր հին ծառայողներից շատերին, որոնց վիճակի բարեփոխութիւնը այդ բաղդաւոր տարիների ծնունդ էր. և նրանց փոխարինելով նորերով, վերջիններիս օրավարձը հասցրեց 90—95 կոպեկ. իսկ ճակատագրի բաղդով ցարդ իրանց տեղում մնացած մի քանի հին ծառայողների դրութիւնն էլ շատ երերուն է և ամեն րոպէ ենթակայ նոյն վիճակին։

Թող զարմանալի չը թւայ, ընթերցող, եթէ ասեմ, որ իւրաքանչիւր քայլափոխում մի քանի հրէշ կօնտրոլյորների կամայական և անարդար գրչի շարժումով փողոց են շպրտվում մի կամ մի քանի հին ծառայողներ. և ես հաստատ գիտեմ, որ ապացոյցներ իսկի չեն էլ պահանջվում։

Անկասկած սրանք սովորական երևոյթ՝ զաքայլին վարչութիւնը։ Իմ կարծիքով՝ այդ ընկերութեան ծառայողների դատի պաշտպանութիւնը քաղաքային իրաւասութեանն է պատկանում, սակայն որը իր շատ իներտ վերաբերմունքով երբէք էլ այդ մասին գլուխ չէ ցաւացնում. և անօնիմ ընկերութիւնը իր ծառայողների նկատմամբ իր անվերջ շահատակութիւնները ազատ կերպով գործադրում է ուզածին պէս։

Հասարակութիւնը մամուլի միջոցով միշտ էլ իր ժամանակին վկայ է լինում անօնիմ ընկերութեան առասպելական դիվիդենտներին, չը նայած որ ամսէ-ամիս ահագին էլ տուգանքներ է տալիս իր պայմանագրութիւնների համար, ու իր այս յանցանքի վրէժը հանում է ծառայողներից՝ ամեն ամիս կօնդուկտօրների ահագին կօնտինգենտ փողոց շպրտելով ամենաղատարկ, թերևս հէնց թիւրիմացական սին շարժառիթներով։ Երեք կոպէկանոց թիւրիմացութիւնը զրկում է հացից 10—15-ամեայ ծառայողին։

Մենք միանգամայն դէմ ենք զողութեան և պնդում ենք, որ պրոֆեսիոնալ գողը և կամ զեղծարարը իր արժանի պատիժը անպայման պէտք է ստանայ. և այդ գողութիւնն ու զեղծումը մի՝ թէ հինգ կոպէկի համար կը լինի՝ այդ միևնոյն է. սակայն մի՞թէ փաստ չէ այն, որ գողութիւնը մեծ մասամբ հետևանք է ծառայողների անապահով դրութեան. իսկ միւս կողմից էլ յաճախ կեանքի մէջ տեսնում ենք, որ գողութիւնը երբեմն տուգանում և ենթակայ պատժում են այն մարդիկ, որոնք հազարներ ստանալով՝ հազարներ էլ «ծածկագրմբոց» են անում։

Ցաւը նրանումն է, որ էլեքտրաքարշի անօնիմ ընկերութեան գործում, ինչպէս հաւաստիացել եմ ճշգրիտ աղբիւրներից, մեծ մասամբ թիւրիմացութիւններն են զեղծում համարվում, որի պատճառով էլ ենթական զրկվում է պաշտօնից. իսկ եթէ դրան աւելացնենք նաև վերահսկիչների թշնամական և անձնական հաշիւներով կատարված մանաքանդ արձանագրութիւնները, այն ժամանակ անպայման պէտք է համոզվենք, որ իսկապէս էլեքտրաքարշի ծառայութիւնը յաճախ կապված է կլեուզների հետ, և սրա ծառայողի վիճակը մաղից է կախված։

Զը գիտեմ թէ հասարակութիւնը ինչ աչքով է նայում այդ մեղք դասակարգին, որոնք օրական մօտ 10 ժամ ոտքի վրա կանգնած ցրտի, բուքի, ձիւնի, անձրևի և կիզիչ արեգակի տակ խաշվելով, իրանց թշուառ դրութիւնը մի կերպ քարշ տալու համար այդ ծառայութիւնը ընտրելով, հարկադրված են էլեքտրաքարշի չորս կողմը վազվզելով տոմսեր բաժանել։ Ես գոնէ խղճում եմ, երբ նրանց տեսնում եմ, և երբ մանաւանդ գիտեմ, որ այդ չարչարանքի հետ՝ նրանց դրութիւնն էլ միանգամայն անապահովութեան հետ է կապված։

Տեսնում էք ուրեմն, թէ ինչպէս է շահագործում ընկերութիւնը իր ծառայողներին։ Մի ընկերութիւն, որ մեծ հռչակ և պատկառելի անուն ունենալու հետ միասին՝ ահագին էլ դիվիդենտ է վերցնում, ապա ուրեմն և պարտաւոր է իր ծառայողների վիճակն ու դրութիւնն էլ բարւոքել և նրանց ապահովութեան մասին էլ մի փոքր մտածել՝ օրինակ վերցնելով նման հաստատութիւններից։ Բեռ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

XXIV

Սոսկալի մղձաւանջը, որ ահա մի քանի տարի է փոքր ինչ հանգիստ էր տուել հայ ազգին, դարձեալ վերսկսում է իր ամբողջ սարսափով։

Հայի ճակատագիրն է այդ։

Նա միշտ պէտք է ապրի սարսափների ու մշտական երկիւղի տակ, նրա գլխի վրա միշտ կախված պէտք է լինի Դամոկլեան սուրը։

Լակօնական հեռագիրները հաղորդում են Թիւրքահայաստանից, որ այնտեղ դարձեալ սկսվել են հայկական կոտորածները։

Տարիների ընթացքում միշտ կոտորածների սարսափելի ուրուականի տակ ապրած թիւրքահայը հաղիւ էր փոքր ինչ ազատ շունչ առել, հաղիւ էր նա ամրացրել իր մէջ այն միտքը, թէ քաղաքականապէս ազատ Թիւրքիայում, որի ազատութեան համար այնքան արիւն էր թափել և ինքը, վերջապէս կարող է ազատ մի շունչ քաշել և ապրել, զուգակցելով մարդկային այն բոլոր իրաւունքներով, որոնց նա արժանի է։ Եւ ահա անցեալի սոսկալի մղձաւանջը դարձեալ բարձրացնում է իր գլուխը։

Հայկական կոտորածներ Թիւրքահայաստանում...

Ո՞ւմ յայտնի չեն նրանք։

Պոնտոսի ափերից մինչև Հիւսիսային Սառուցեալ ովկիանոսի ափերը, ազատ Ազիոնից մինչ Նիպոնի կղզիները և ամենուրեք հաղիւ թէ մի տեղ գտնվի, որտեղ տարածված չը լինի հայկական ջարդերի տխուր գոյժը։

Վերջին դարերի հայոց պատմութիւնը իր մէջ հազարաւոր մարտիրոսագրութեան էջեր է պարունակում. հայի արիւնից ալեկոծ գետեր են կազմվել և հայի հառաչանքի աղաղակները երկինք են թռնդացրել դարերի ընթացքում։

Դարեր են անցել, կառավարութիւններ են փոխվել, նոր օրէնքներ մտցվել, ազատ երկիրներ ու պետութիւններ ստեղծվել. և սակայն հայը երբէք, երբէք չէ կարողացել գոնէ մի օր ազատ շունչ քաշել։

Մի՞ՀԱՊԵՔի դաշտերից սկսած մինչև Կովկասեան Լեռնաշղթան և Բոսֆորի ափերից մինչև Ատրպատականի անտառները միշտ հայի հառաչանքն է լսվել, միշտ նրա արցունքներով ցօղվել հողը և նրա արեամբ ներկվել գետերը...

Եւ միշտ էլ մեղաւորը հայն է եղել...

Ո՞ւմ յայտնի չէ այն փաստը, որ երկաթուղային գնացքների խորտակման մէջ միշտ էլ «СТРѢЛОЧНИКЪ ВИНОВАТЪ».

Այդ մի ակսիօմա է, որը արդէն միս ու արիւն է դարձել։

Եւ ահա հայն էլ միշտ այդ խելք СТРѢЛОЧНИКЪ-ի դերումն է գտնվում։

Թիւրքն է ջարդում հային թէ քիւրդը յօշոտում, պարսիկն է խողխողում նրան թէ ենիչերին խմում նրա արիւնը՝—միշտ էլ հայն է մեղաւոր...

Եւ այդ համոզմունքը այնպէս արմատացել է ամենքի մէջ, որ միշտ, երբ հայկական կոտորածների լուրեր են հասնում, ամեն տեղ մի անփոփոխ հարց է տրվում. «Տեսնես դարձեալ հայերը ինչ են արել...»։

Այո, տեսնես դարձեալ հայերը ինչ են արել...

Զէ՞ որ ով ուժեղ է, իրաւունքը միշտ էլ նրանումն է։

Ցիշեցէք «Գայլն ու գառը» առակը։

Գայլը քաղցած է, ուզում է գառանը ուտել, և ահա արդար երևալու համար նա պատճառներ է փնտռում, մեղքեր բարդում գառան վրա։

Ուրիշների աչքին թող փչելու, իրան արդարացնելու համար նա ինչեր ասես որ չէ հնարում գառան մասին, որովհետև ամաչում է, չէ ուզում պարզ ասել, թէ ես ուժեղ եմ և դու թոյլ, ես քաղցած եմ և ուզում եմ քեզ ուտել...։

Զէ՞ որ մերկ ճշմարտութիւնը կը լինի չափազանց կոպիտ և աչք ծակող։

Եւ ահա հայն էլ դարերի ընթացքում այդպիսի մի գառն է եղել, գայլերով շրջապատված, և նրան յօշոտել են, կրել, ամեն անգամ էլ նորանոր մեղքեր բարձելով նրա վրա։

Նա կամ առուակի ջուրն է կեղտոտել, կամ նրա եղբայրը հայհոյել է գայլին, կամ նրա հայրը գլուխ չէ տուել նրան։

Եւ ահա պատճառը պատրաստ է, և հոսում է հայի արիւնը, հնչում են նրա մահվան ճչտաժամի աղաղակները։

Դարեր են անցել և դարեր կանցնեն, բայց հայը միշտ էլ հայկական կոտորածների սոսկալի մղձաւանջի տակ է ապրել և կապրի, մինչև որ...։

Մինչև Բրը։ Վ. Թումանեան

Բագու

ԵՒԱՆ-ՇՈՒՇԻՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԱՊԱԳԱՑ ԳԻՇԸ

Հաւ է ուշ, քան երբէք

Բագու, 10 սեպտեմբերի

Բագուի հայ հասարակութիւնը, մանաւանդ շուշեցիները և զանգեզուրցիք, բաւական հրճուանքով կարդացին Պետերբուրգից ուղղակի «Մշակին» ուղղված Աւան-Իւզբաշեանի, Միրզա Սարուխանեանի և Ստ. Ռիլսկիի հեռագիրը, որով, յարգելի պարոնները զիջանելով «Մշակի» միջոցով լսվող հասարակութեան խուլ բողոքներին՝ 500,000 բուբլու ակցիաներ են թոյլատրում վաճառելու նորից։

Հեռագրող պարոնները իրանց հեռագիրը ուղղակի «Մշակին» ուղղելով չէին սխալվել, ի նկատի առնելով, անշուշտ, որ ոչ մի լրագիր այնքան չէ հետաքրքրվել, իր էջերը լայն չէ բացել յօգուտ Շուշու երկաթուղու, որքան «Մշակը»—թէ առաջնորդող յօդուածներով և թէ զանազան ելեթակիցների բերանով։ Սակայն, երբ Բագուում «Մշակի» այն համարը, ուր տպված էր վերոյիշեալ հեռագիրը, ստացվեց, հասարակութիւնը, առանց բոպէ կորցնելու, շտապեց զանազան բանկային հաստատութիւնները ակցիաներ գնելու, բայց, դժբաղդաբար, ձեռնունայն յետ դառաւ։ Գնել ցանկացողները ապա դիմեցին Սարուխանեանի գրասենեակը, ուր, ինչպէս լսեցինք, խոստացվել է հնար եղածին չափ շուտ կարգադրութիւն անել։

Դեռ մինչև ներկայ բոպէս էլ ոչ մի ակցիա, «Մշակի» հեռագրից յետոյ, հնար չէ եղել ձեռք բերել հասարակութեանը, իսկ բիրժայում վաղուց գնված ակցիաները առաջարկվում են մեծ գներով։

Զարմանի է կովկասցիներիս անհոգութիւնը դէպի այդպիսի շահաւէտ, արդիւնաւէտ ձեռնարկութիւնները... Եւ այդ դատապարտելի անտարբերութիւնը մեր երկրի բոլոր արդիւնաբերութիւնը ձգել է [illegible] սիացիների ձեռքը, որոնք ծծելով մեր երկրի աղը, մեր առաջ մի մի Թիքա են շպրտում... Միրզա Սարուխանեանը երկար տարիներ աշխատեց, տարվայ վեց ամիսը օտարութեան մէջ՝ պաշտօնեաների դուռը մաշեց, գծի կառուցման համար գեփինների իրաւունք ձեռք բերեց, մի քանի սահմանակ հաղարներ իր գրպանից, սեփական զումարից ծախսեց, սկզբնական անհրաժեշտ ծրագիրներ կազմեց և վերջապէս կարողացաւ գոյացնել Սակայն Սարուխանեանը խօսքը կարող ամբողջ գծի կառուցման ծախքը իր վրա վերցրել։ Ամերիկացի միլիարդատէրերն մնում են հայերի շատ տների կատուների վրա գնդակների բացած ծակերը։ Ամեն բոպէ սպասվում էր, որ ֆէդայիները ամեն կողմից գրոհ կը տան. եթէ բոլոր 800 ռուս զինուորներն ևս կարողանային մի տեղ հաւաքվել, ի՞նչ կարող էին նրանք անել հազարաւոր ֆէդայիների դէմ։ Միակ յոյսը Շուշաուզ-Դօվլէթի վրա էր. հաւատացած էին, որ երբ նա խմանայ, կը շտապէ հիւպատոսարանին և հայոց թաղին օգնութեան։

— Բայց ինչ էիք անում դուք հայերդ։

— Ոչինչ. ամեն մէկս իր անում ամրացած, մի որևէ զէնք ձեռքին, սպասում էինք, որպէս զի յարձակման դէպքում մեր տների վրա՝ պաշտպանվինք։ Կարող էք երևակայել, թէ ի՞նչ սոսկալի աղէտի են ենթարկում իրանց և ամբողջ հայ ժողովուրդը, յարձակումն գործելով ռուսաց զօրքի վրա. մի՞թէ նրանց մէջ չը կային դէթ մի քանի փոքր ի շատէ խոհեմ և հասկացող անձինք։

— Ինչու՞ չէ. օրինակ, «Դուման» անունով շէֆերից մինը կար. նա բաւական խոհեմ մարդ է. համոզված էինք, որ նա թոյլ չէր տայ. բայց դրա հետ մենք գիտէինք, որ նրանց մէջ կան և Ստեփանեանի պէս ոճրագործներ, որոնց համար ոչ մի նշանակութիւն չունի, եթէ ամբողջ հայ ազգը կոտորվի։

— Վերջը ինչ ստացվեց։

— Իմացվեց, որ, արդարև, այդ նզովից արմատ Ստեփանեանը, իրան նման մի քանի ոճրագործների հետ, հաւաքել էին դաշնակցականներին և գնացել Արքը, որ միանան Էմիր-Հիշմաթի հետ՝ «փրկելու համար Պարսկաստանը»։ Բայց վրա էր հասել Դուման, յորդորել, ցոյց տուել նրանց քայլի բոլոր աղէտալի հետևանքները. միւս կողմից Թէհրանից հասել էր Եփրեմի կողմից մի հեռագիր, որով պատուիրում էր ամենևին որևէ քայլ չանել ռուսաց զօրքի դէմ և ձեռնպահ մնալ։ Այն ժամանակ դաշնակցականները ցրվել էին և լքել իրանց ընկեր պարսիկ ֆէդայիներին ու Էմիր-Հիշմաթին։

— Եւ ինչ եղան այդ դաշնակցականները և ֆէդայիները, երբ լսեցին, որ ռուսաց զօրքը սկսել է շարժվել Զուլֆայից։

— Ի՞նչ պէտք է լինէին. վախենալով պատժից, դաշնակցականները փախչում են Խոյ, Սալմաստ, այդտեղից ևս իրանց ձգում Թիւրքիա՝ իրանց մի այլ շէֆի՝ Սամսոնխանի հետ, իսկ Ստեփանեանը, վախենալով որ կարող է ճանապարհին բռնվել, փախչում և ապաստան է որոնում օսմանեան հիւպատոսարանում, ըէյտ նստելով։

— Իսկ ինչ եղաւ Էմիր-Հիշմաթը իր պարսիկ ֆէդայիներով։

— Նրանք շարունակում էին իրանց հրացանաձգութիւնները ռուսաց կէտերի վրա, իշխանութիւնները, նոյն իսկ ֆէդայիները և թէ ռուսաց իշխանութիւնները։ Եւ ահա մի առաւօտ սարսափով լցվեցինք։ Լուր տարածվեց, որ ֆէդայիները, Էմիր Հիշմաթի ղեկավարութեամբ, մի մեծ դաւադրութիւն են սարքել. ծրագրել են ամբանալ Արքում, քաղաքի մի քանի կէտերում դիրք բռնել, յարձակվել ռուս զինուորների և հիւպատոսարանի վրա, այն յոյսով, որ եթէ կոտորեն բոլոր 800 զինուորներին և քանդեն հիւպատոսարանը, ռուսները այլ ևս չեն յանդգնի գալ Պարսկաստան, և Պարսկաստանը կազատվի նրանց ներկայութիւնից։ Ապա յայտնվեց, որ, յիրաւի, ֆէդայիները ամբացել են Արքում, բարձրացրել են բերդի վրա նոյն իսկ Թնդանօթ, սկսել են հրացանաձգութիւն հիւպատոսարանի և այն կէտերի վրա, ուր ապրում են ռուս զինուորները, իսկ քաղաքի մի քանի կէտերում, դարանամուտ լինելով, սպանել են մի քանի զինուորներ։ Եւ սպանել են ամենադաժան, ամենաբիրտ Թուրքական վրէժխնդրութեամբ. մի զինուորի բռնելով՝ վրան թափել էին նաւթ և կենդանի այրել։ մի ուրիշին կենդանի ցեխել և ծեծել են պատի մէջ. մի երրորդին կտոր-կտոր էին արել դանակով։ Գնդակները մեր աչքի առաջ, սուլելով, դիպչում էին մեր տների պատերին։ Հիւպատոսարանը, ուր միայն մի քանի կօզակներ կային, շուարած մնացել էր, որովհետև ֆէդայիները բոլոր մուտքերը բռնած լինելով, հնարաւորութիւն չը կար Բաղը-Շիմալում բանակած գլխաւոր զօրամասին իմաց տալ և օգնութիւն խնդրել։ Պարզ էր, որ եթէ ֆէդայիները կարողանային մտնել հայոց Թաղը, աւերել հիւպատոսարանը, նրանք չէին խնայելու և հայերի տները ու հայերին։ Հայերիս առաջին գործն եղաւ հսկել և Թոյլ չը տալ, որ հայոց Բերդաթաղում ֆէդայիները դիրքեր գրաւեն, հիւպատոսարանի վրա յարձակվելու նպատակով, ինչպէս փորձել էին առաւօտեան, բայց չէին աջողել։ Մինչև այժմ ևս ուղ-Դօվլէթի հեծելազօրքով։

— Իսկ ինչ էր անում ռուսաց զօրքը։

— Ռուսները չէին միջամտում քաղաքի կառավարութեան և գործերին. նրանք եկել էին պաշտպանելու հիւպատոսարանը, ռուսաց հպատակներին, երբ նրանց որևէ վտանգ սպառնար։ Այդ միջոցին Թաւրիզից հեռացան՝ Էջմիածին գնալու՝ առաջնորդ կարապետ եպիսկոպոսը և ռուսաց վաճառականապետ Զաքարիա Նազարբէկեանը, որոնք հայերի միակ միջնորդներն էին թէ տեղական իշխանութիւնների և թէ հիւպատոսների առջև։ Ամենքս ապրում էինք խոր անձկութեան մէջ. ընդհարաբ դուշակում էինք մի նոր աղէտ։ Միայն դաշնակցականներն էին, որ զգում էին իրանց այնպէս, ինչպէս ձուկը ջրի մէջ։ Մենք սաստիկ վախենում էինք, որ նրանք մի անխոհեմութիւն չը գործէին, մի սխալ քայլ չանէին և մեզ հայերիս սոսկալի վտանգի չենթարկէին։ Մինչ այդ՝ անորոշ շշուկներ էին պտտում, թէ ֆէդայիները մտադիր են յարձակվել ռուսաց զօրքի, հիւպատոսարանի վրա, և մենք երկիւղ էինք կրում, որ չը լինի թէ դաշնակցականները մխանալով ֆէդայիներին՝ գրգռեն մեզ՝ հայերիս վրա ռուսաց զօրքի և կառավարութեան զայրոյթը։ Դեռ Կարապետ եպիսկոպոսը Էջմիածին չը գնացած, ռուսաց ընդհանուր հիւպատոս Միլլերը, որ մի ազնիւ մարդ էր, զգուշացրել էր առաջնորդին՝ խրատել դաշնակցականներին՝ զգոյշ կենալ, այլապէս, ասել էր նա, եթէ հաստատվի հայերի որևէ մասնակցութիւնը դաւադրութեան մէջ ընդդէմ ռուսաց զօրքի, հայերը կարող են բնաջինջ լինել ամբողջ Ատրպատականում։ Եպիսկոպոսը հաւատացրել էր հիւպատոսին, որ հայերի կողմից որևէ անզգոյշ կամ անխոհեմ քայլ ռուսաց զօրքի դէմ սաստիկ կայելի է։ Այնու ամենայնիւ հայոց երկու Թաղերը անձկութեամբ լի՝ զգում էինք մեզ մի տեսակ անպաշտպան, չունենալով մեր մէջ առաջնորդին և մանաւանդ Թաղիրքաշիին, որին յարգում էին թէ պարսիկ իշխանութիւնները, նոյն իսկ ֆէդայիները և թէ ռուսաց իշխանութիւնները։ Եւ ահա մի առաւօտ սարսափով լցվեցինք։ Լուր տարածվեց, որ ֆէդայիները, Էմիր Հիշմաթի ղեկավարութեամբ, մի մեծ դաւադրութիւն են սարքել. ծրագրել են ամբանալ Արքում, քաղաքի մի քանի կէտերում դիրք բռնել, յարձակվել ռուս զինուորների և հիւպատոսարանի վրա, այն յոյսով, որ եթէ կոտորեն բոլոր 800 զինուորներին և քանդեն հիւպատոսարանը, ռուսները այլ ևս չեն յանդգնի գալ Պարսկաստան, և Պարսկաստանը կազատվի նրանց ներկայութիւնից։ Ապա յայտնվեց, որ, յիրաւի, ֆէդայիները ամբացել են Արքում, բարձրացրել են բերդի վրա նոյն իսկ Թնդանօթ, սկսել են հրացանաձգութիւն հիւպատոսարանի և այն կէտերի վրա, ուր ապրում են ռուս զինուորները, իսկ քաղաքի մի քանի կէտերում, դարանամուտ լինելով, սպանել են մի քանի զինուորներ։ Եւ սպանել են ամենադաժան, ամենաբիրտ Թուրքական վրէժխնդրութեամբ. մի զինուորի բռնելով՝ վրան Թափել էին նաւթ և կենդանի այրել։ մի ուրիշին կենդանի ցեխել և ծեծել են պատի մէջ. մի երրորդին կտոր-կտոր էին արել դանակով։ Գնդակները մեր աչքի առաջ, սուլելով, դիպչում էին մեր տների պատերին։ Հիւպատոսարանը, ուր միայն մի քանի կօզակներ կային, շուարած մնացել էր, որովհետև ֆէդայիները բոլոր մուտքերը բռնած լինելով, հնարաւորութիւն չը կար Բաղը-Շիմալում բանակած գլխաւոր զօրամասին իմաց տալ և օգնութիւն խնդրել։ Պարզ էր, որ եթէ ֆէդայիները կարողանային մտնել հայոց Թաղը, աւերել հիւպատոսարանը, նրանք չէին խնայելու և հայերի տները ու հայերին։ Հայերիս առաջին գործն եղաւ հսկել և Թոյլ չը տալ, որ հայոց Բերդաթաղում ֆէդայիները դիրքեր գրաւեն, հիւպատոսարանի վրա յարձակվելու նպատակով, ինչպէս փորձել էին առաւօտեան, բայց չէին աջողել։ Մինչև այժմ ևս մնում են հայերի շատ տների կատուների վրա գնդակների բացած ծակերը։ Ամեն բոպէ սպասվում էր, որ ֆէդայիները ամեն կողմից գրոհ կը տան. եթէ բոլոր 800 ռուս զինուորներն ևս կարողանային մի տեղ հաւաքվել, ի՞նչ կարող էին նրանք անել հազարաւոր ֆէդայիների դէմ։ Միակ յոյսը Շուշաուզ-Դօվլէթի վրա էր. հաւատացած էին, որ երբ նա խմանայ, կը շտապէ հիւպատոսարանին և հայոց Թաղին օգնութեան։

— Բայց ինչ էիք անում դուք հայերդ։

— Ոչինչ. ամեն մէկս իր անում ամրացած, մի որևէ զէնք ձեռքին, սպասում էինք, որպէս զի յարձակման դէպքում մեր տների վրա՝ պաշտպանվինք։ Կարող էք երևակայել, թէ ի՞նչ սոսկալի աղէտի են ենթարկում իրանց և ամբողջ հայ ժողովուրդը, յարձակումն գործելով ռուսաց զօրքի վրա. մի՞թէ նրանց մէջ չը կային դէթ մի քանի փոքր ի շատէ խոհեմ և հասկացող անձինք։

— Ինչու՞ չէ. օրինակ, «Դուման» անունով շէֆերից մինը կար. նա բաւական խոհեմ մարդ է. համոզված էինք, որ նա Թոյլ չէր տայ. բայց դրա հետ մենք գիտէինք, որ նրանց մէջ կան և Ստեփանեանի պէս ոճրագործներ, որոնց համար ոչ մի նշանակութիւն չունի, եթէ ամբողջ հայ ազգը կոտորվի։

— Վերջը ինչ ստացվեց։

— Իմացվեց, որ, արդարև, այդ նզովից արմատ Ստեփանեանը, իրան նման մի քանի ոճրագործների հետ, հաւաքել էին դաշնակցականներին և գնացել Արքը, որ միանան Էմիր-Հիշմաթի հետ՝ «փրկելու համար Պարսկաստանը»։ Բայց վրա էր հասել Դուման, յորդորել, ցոյց տուել նրանց քայլի բոլոր աղէտալի հետևանքները. միւս կողմից Թէհրանից հասել էր Եփրեմի կողմից մի հեռագիր, որով պատուիրում էր ամենևին որևէ քայլ չանել ռուսաց զօրքի դէմ և ձեռնպահ մնալ։ Այն ժամանակ դաշնակցականները ցրվել էին և լքել իրանց ընկեր պարսիկ ֆէդայիներին ու Էմիր-Հիշմաթին։

— Եւ ինչ եղան այդ դաշնակցականները և ֆէդայիները, երբ լսեցին, որ ռուսաց զօրքը սկսել է շարժվել Զուլֆայից։

— Ի՞նչ պէտք է լինէին. վախենալով պատժից, դաշնակցականները փախչում են Խոյ, Սալմաստ, այդտեղից ևս իրանց ձգում Թիւրքիա՝ իրանց մի այլ շէֆի՝ Սամսոնխանի հետ, իսկ Ստեփանեանը, վախենալով որ կարող է ճանապարհին բռնվել, փախչում և ապաստան է որոնում օսմանեան հիւպատոսարանում, ըէյտ նստելով։

— Իսկ ինչ եղաւ Էմիր-Հիշմաթը իր պարսիկ ֆէդայիներով։

— Նրանք շարունակում էին իրանց հրացանաձգութիւնները ռուսաց կէտերի վրա,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԱՄԻՍ ԹԱՒՐԻԶՈՒՄ*)

(Ուղեւորական ակնարկներ)

III

Ինչպէս յայտնի է, անցեալ տարի, դեկտեմբերից առաջ, ռուսաց զօրք շատ քիչ կար Թաւրիզում, ընդամենը 800 զինուոր, որոնք տեղաւորված էին մաս-մաս զանազան կէտերում, Բաղը-Շեմալ մեծ այգում, Ալա-Ղափու պալատում և այլ տեղերում։ Թաւրիզի նահանգապետն էր Զիա-ուդ-Դօվլէթ շահզադէն, որ ֆէդայիների և յեղափոխականների կողմնակից էր, իսկ նրանց գլխաւորն էր Էմիր-Հիշմաթ անունով մի կրթեալ անձն։ Բայց Թաւրիզը այդ ժամանակ շրջապատված էր Մարազայի նահանգապետ հաջի Սամադ-խան Շուջա-ուդ-Դօվլէթից, որ իր 800 ձիաւորներով պաշարել էր քաղաքը և կտրել բոլոր ճանապարհները, այնպէս որ կենսական մթերքների մեծ պակասութիւն էր զգացվում քաղաքում։

— Ասացէք, խնդրեմ,—հարցրի ես,—Շուջա-ուդ-Դօվլէն յօգուտ ո՞ր կողմի էր գործում, յեղափոխականների թէ միապետականների։

— Ոչ մէկի և ոչ միւսի. հիշդ է, նա իր համոզումներով միապետական է, կամ աւելի հիշդն ասած՝ կողմնակից է Մահմէդ-Ալի շահի վերադարձման, բայց ներկայ դէպքում նա հանդէս էր եկել լանուն ժողովրդի պաշտպանութեան թէ ֆէդայիների և թէ միապետականների կեղեքումներից։ Նա թոյլ չէր տալիս ճանապարհներին աւազակութիւններ. ճանապարհը Թաւրիզից Զուլֆա բաց էր և ապահով։ Սակայն քաղաք մտնել չէր կարողանում։ Ահա այդպիսի դրութեան մէջ էինք մենք ամենքս. ներսում՝ մասնված ֆէդայիների և միապետականների կեղեքումներին, դրսից՝ շրջապատված Շուջա-ուդ-Դօվլէի հեծելազօրքով։

— Իսկ ի՞նչ էր անում ռուսաց զօրքը։

— Ռուսները չէին միջամտում քաղաքի կառավարութեան և գործերին. նրանք եկել էին պաշտպանելու հիւպատոսարանը, ռուսաց հպատակներին, երբ նրանց որևէ վտանգ սպառնար։ Այդ միջոցին Թաւրիզից հեռացան՝ Էջմիածին գնալու՝ առաջնորդ կարապետ եպիսկոպոսը և ռուսաց վաճառականապետ Զաքարիա Նազարբէկեանը, որոնք հայերի միակ միջնորդներն էին թէ տեղական իշխանութիւնների և թէ հիւպատոսների առջև։ Ամենքս ապրում էինք խոր անձկութեան մէջ. ընդհարաբ դուշակում էինք մի նոր աղէտ։ Միայն դաշնակցականներն էին, որ զգում էին իրանց այնպէս, ինչպէս ձուկը ջրի մէջ։ Մենք սաստիկ վախենում էինք, որ նրանք մի անխոհեմութիւն չը գործէին, մի սխալ քայլ չանէին և մեզ հայերիս սոսկալի վտանգի չենթարկէին։ Մինչ այդ՝ անորոշ շշուկներ էին պտտում, թէ ֆէդայիները մտադիր են յարձակվել ռուսաց զօրքի, հիւպատոսարանի վրա, և մենք երկիւղ էինք կրում, որ չը լինի թէ դաշնակցականները մխանալով ֆէդայիներին՝ գրգռեն մեզ՝ հայերիս վրա ռուսաց զօրքի և կառավարութեան զայրոյթը։ Դեռ Կարապետ եպիսկոպոսը Էջմիածին չը գնացած, ռուսաց ընդհանուր հիւպատոս Միլլերը, որ մի ազնիւ մարդ էր, զգուշացրել էր առաջնորդին՝ խրատել դաշնակցականներին՝ զգոյշ կենալ, այլապէս, ասել էր նա, եթէ հաստատվի հայերի որևէ մասնակցութիւնը դաւադրութեան մէջ ընդդէմ ռուսաց զօրքի, հայերը կարող են բնաջինջ լինել ամբողջ Ատրպատականում։ Եպիսկոպոսը հաւատացրել էր հիւպատոսին, որ հայերի կողմից որևէ անզգոյշ կամ անխոհեմ քայլ ռուսաց զօրքի դէմ սաստիկ կայելի է։ Այնու ամենայնիւ հայոց երկու Թաղերը անձկութեամբ լի՝ զգում էինք մեզ մի տեսակ անպաշտպան, չունենալով մեր մէջ առաջնորդին և մանաւանդ Թաղիրքաշիին, որին յարգում էին թէ պարսիկ

*) Ցեր «Մշակ» № 203.

կեանքի գնով ձեռք բերած քաջի բերանը բռնած և ուր գրագիր, դատաւոր և տանուտէր իրանց ամբողջ ստոր ու զազիր, յայտնի և անյայտ գործունէութեամբ երևում։

Այո, շատ խօսք, շատ գեղեցիկ զգացմունքներ ունի իմ գիւղական ընկերը։ Նա ծրագիրներ ունի, որ իրագործելու համար ինքը գիշեր-ցերեկ մտածում է, ուանվերջ մտածում։

Սպառողական խանութի գաղափարն է արծարծում, կուլակ խանութպանը նրան զգուշացնում է։ Եւ այդ ծր գիւղական ուսուցիչն է, որ մինչ օրս համարձակութիւն է ունեցել իր խանութպան հոգաբարձուի թանկին թեռ ասել։

Ասում է շահմարանի անհրաժեշտութեան մասին, թէ զանազան պատահարներից արտերի վնասները դէպքում որպիսի մեծ օժանդակութիւն կարող է տալ գիւղացուն. ահա գլուխ է բարձրացնում մէկին երկուերեք աւելով ցորեն փոխ տուող գիւղացին ասելով.

— Քու ինչ գործդ է. վարժապետ ես, քու երեխաներիդ կարդացրու. եկել ես մեր գիւղական սովորութիւնները փոխելու, ինչ է։

Եւ իմ իսկ ներկայութեամբ, երբ ուսուցիչը խօսում էր վարկային ընկերութեան տուած օգուտներից, թէ իրանց գիւղում ինչպիսի ուրախութեամբ բացին այդ ընկերութիւնը և գիւղացիք անդամագրվելու համար որպիսի եռանդ էին ցոյց տուել, կողքից կանգնած գիւղացին, որ 20 տարեկանից սկսած ամբողջ 20—25 տարի պարտքի տակ ճնշված, դիզված տոկոսներն անդամ անզօր է վճարելու, քիթը վեր է քաշում և ասում.—Է՛յ, ինչ օգուտ, բանկը փողը բերելու է ինձ բախշի. իմ հարուստը, Ակին, Բիւնեաթը, Մանուչարը թողելու եմ գնամ, թէ ինչ է՝ բանկը մին երկու կոպէկ պակաս է տալիս։

Այո, սա մեր չարքաշ հայ գիւղացու դատողութեան նմուշներից մէկն է։

Այս և նման հարիւրաւոր օրինակներով կարելի է հաստատել, որ գիւղական ընկեր ուսուցիչները շատ քիչ համակրողներ ունեն իրանց շրջապատում։ Եւ այդ քչերն էլ այն երիտասարդ շատ թէ քիչ գրագէտ գիւղական տղաներն են, որոնք սնված լրագիրներով, պատմական վէպերով, մանր և պատահական բրոշիւրներով՝ հարուստ են դարձեալ զգացումներով, խօսքերով, բայց դրանք ևս զրկված են հայ ուսուցչի պէս ժամանակի ձգողական, գերեշխող, իմաստուն դարձնող փողից։

Սակայն գիւղական կեանքում չունենալ փող և խօսել այդ և նման գեղեցիկ ձեռնարկութիւններից, այդ գիւղացու համար նոյնն է՝ թէ ասել այս-ինչ կերակուրը այսպէս է լաւ, այնպէս է լաւ, միաժամանակ և տեսած չը լինել, համն էլ առած չը լինել։

Ուսուցիչը, որքան էլ նա քաշված և առանձնացած ապրի գիւղում, որքան էլ աշխատի չը վիրաւորել գրագրին, տանուտէրին, դատաւորին և դրանցից աւելի մեծ պաշտոնեայներին, բայց էլի դէպք է լինում, որ աչք փակելը դժուար է լինում. տեսնում է մի մեծ զրկողութիւն, մի անսիրտ հարստահարում, և մարդկային խիղճը նրան՝ այդ գիւղական ընկեր ուսուցչին ստիպում է մրթակել, մերկացնել այդ ստորութիւնը, լրագրութեան տալ այդ զրկողութիւնը։ Եւ ահա ձեզ պատրաստի հոդ, ուր պատում են կեղծ ստորագրութիւններ, ուսուցչի դէմ բողոքներ զանազան խարդախ դաւեր նրան գիւղից հեռացնելու համար։ Ի՞նչպէս կարելի է և ո՞րտեղ է գրված, որ ուսուցիչը հաշտարար միջնորդի հակառակ՝ նրա այս կամ այն գործողութեան դէմ գնայ։

Եւ կը հարածեն գիւղական ուսուցչին գղերից սկսած մինչև յիշեալ պաշտօնեան իր արբանեակներով։

— Ատամը մօտ չի անում վարժապետին, կարողանում չի ինքն էլ հնձի, դրա համար էլ ձայն է հանում։

Այսպէս է ուսուցչի սիրտը այրում, եռանդի վրա ջուր ածում տգէտ գիւղացին, այն գիւղացին, որ իր սրտակից բարեկամ ուսուցչի ամեն մի ազնիւ զգացմունքի տակ, նախանձ, կիրք, յետին միտք է որոնում։

Այս բոլորից յետոյ կասեմ, որ մեծ և այսքան խոչընդոտներով հանդերձ շատ մեծ է գիւղական ուսուցչի դերը։ Այսքան արհաւիրքներով շրջապատված լինելով, այնու ամենայնիւ նա իր գործն է առաջ տանում, իր լուծը մաղում։

Եւ թող դարերից լճացած, պապերից գիւղացուն միակ ժառանգութիւն մնացած տգիտութիւնը, չկամութիւնը, լոյսից փախչելը և այլ գռեհիկ արտայայտութիւնները մեր ընկեր ուսուցչին չը վհատեցնեն։ Թող նա իր մաճը բռնած հերկէ բիրտ սերմերը, փորփրէ այդքան կարծրացած զգացմունքները ապագայում մի նոր, մի երանելի գիւղական գեղեցիկ, վայելուչ և համակրելի կեանք ստեղծելու։

Ընկեր, դու մի վհատիր, քո առաջ կանգնած գիւղական մանուկների սիրտը այժմ անկազմ կաւի կտորի պէս քո ձեռքին է. ձև տուր, կազմիր, շունչ, գիտութիւն տուր նրան, և մօտ ապագայում քո զգացմունքները, քո գաղափարը, գիտութեան գաղափարը կը տիրէ գիւղում։

Մերն է, ընկեր, ապագան՝ ոչ թէ կուլակը, կաշառակերը, գղերը, գրագիրն են կրթում սերունդը, ապագայ մարդկութիւնը, այլ մենք, քաղցած ուսուցիչներս։

Սաղանդարեան

ՐԱԴԻՇԵՎ

(1749—1902)

Սեպտեմբերի 11-ին լրացաւ Ռադիշչեվի ինքնասպանութեան 110-ամեակը. տաս տարի առաջ, 1902 թ-ին անհնար էր Ռադիշչեվի մասին ակնարկներով խօսելն անգամ. գրաքննութեան արգելքն էր խանգարողը։ Այդ պատճառով երևի այս օրերս ռուս մըտաւորականութիւնը կը յիշէ իր նախահօրը և նրան արժանի մեծարանքներ կը կազմակերպէ։

Հայերիս համար օտար է Ռադիշչեվը. բայց որպէս համամարդկային ազատագրման մարտիկներից մէկը, որպէս հարևան ազգի աշխատաւորների երդուեալ-պաշտպան արժէ, որ մենք էլ յիշենք այդ նահատակին եւ բախտագիտութեամբ և մեր նորելուկներին ծանօթացնենք անցեալի գործիչին։

Ռադիշչեվը յայտնի է իր «Путешествіе изъ Петербурга въ Москву» ճանապարհորդական տպաւորութիւններ պարունակող գրքոյկով. նա կառքով Պետերբուրգից Մոսկվա է գնացել և այդ առիթով գրի է առել իր դիտողութիւնները և խորհրդածութիւնները։ Իբր գրական երկ, իր հիւսուածքով՝ զերօյի է հաւասարվում այս հատորը. բայց նշանաւոր է նա որպէս իր շրջանի ծնունդ, որպէս առաջին ապացոյցը ռուս մտածողների զոյացման և նրանց գիտելու, քննադատելու ու ձգտման ընդունակութեան։ Ռադիշչեվը իր այս շարադրութեամբ առաջին գիտակցական ուժեղ հարուածն է տալիս իր ժամանակ տիրող անարդար իրաւակարգին, ճորտատիրութեան սիստեմին, որին նա «Стоглавое зло» բնորոշումն էր տուել։ Եւրոպական դատարակութիւն ստացած (Եկատերինեան կառավարութիւնը նրան 12 ընկերների հետ ուղարկել էր արտասահման կատարելագործվելու) և 18-րդ դարի ազատամտութեամբ ոգևորված Ռադիշչեվը դիտում է իր շուրջը, ծանօթանում է իր հայրենիքի հետ և խորունկ վիշտ է ճաշակում. իր գրքի նախաբանում նա լուսաւոր մտածողութեամբ ըմբռնել է, որ մարդկանց դժբաղդութիւնը առաջ է գալիս հէնց իրանից մարդուց, և որ մարդու երջանկութիւնը կախում չունի հողից և կլիմայից. մարդիկ են մարդկանց բաղդի որոշողները։ Բայց մարդը չէ ճանաչում իրան. նա չը գիտէ, որ ինքը, որպէս հասարակութեան անդամ, կարող է մասնակից լինել հասարակութեան կառավարման։ «Բոլոր մարդիկ միատեսակ են երևան գալիս, միանման անդամներով, բանականութեամբ և կամքով են օժտված. ուրեմն մարդ ոչ մի կախում չունի իր նմանից և բոլորովին ազատ է. եթէ նա որոշ պայմաններով կապված չէ հասարակութեան, եթէ մարդ համաձայնվում է հպատակվել հասարակութեան մէջ եղած իշխանութեան, այդ անում է միայն իր օգուտի համար։ Ուրեմն, ուր հասարակութեան անդամ լինելը մարդուն օգուտ չէ տալիս, նա այդպիսին չէ։ Պետութեան նպատակը պէտք է լինի երկրի ամբողջութեան բարեկարգրութիւնը, որ հիւսվում է առանձին անհատների բարեկամութիւնից. դրա համար չէ կարելի երանելի անուանել այն երկիրը, ուր քաղաքացիներից հարիւրը յղփացած են փարթամութեան մէջ և այլանդակվում են անգործութիւնից, իսկ հազարը զուրկ են ցամաք հացից, սեփական յարկից և այլանդակում են իրանց մարմինը չափազանց աշխատանքից...» *)։

Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից (1789 թ.) մի տարի յետոյ է գրել Ռադիշչեվը իր այս տողերը։ Նա խկութեամբ էր հասկացել «մարդու իրաւունքների դեկլարացիան» և խրախուսված Եկատերինա II կայսրուհու ազատամտութեամբ՝ ճորտատիրութեան վերացման քարոզն է հնչեցնում, ապագայի նախագծերն է մշակում, քննադատութեան և բողոքի արտայայտման խրատն է տալիս իր թշուառ հայրենակիցներին, գրաքննութեան վերացումն է պահանջում, միաքը ազատ յայտարարում և այդպիսով հիմք է դնում ռուս ինտելիգենցիային, որի նախահայրն է իրաւամբ համարվում։ Իր տնային տգարանում գիրքը տպելուց յետոյ տարածում և... «տուզաղը ընկնում»։ Եկատերինա II-ը—որ կանացի սեթևեթութեամբ 18-րդ դարի լուսաւոր մտքերի ծանօթութիւններով էր զարդարել իր ժամանակի ռուսական արդարութիւնը, ճորտատիրութիւնը, և առերեսս ազատամիտ էր—Ռադիշչեվին՝ նրա գրքի համար՝ Սիբիր է ուղարկում և գրքի ոչնչացման հրամանն է արձակում։

Վեց տարի Սիբիրում մնալուց յետոյ, Պավել I-ի ժամանակ թոյլտուութիւն է ստանում վերադառնալ, իսկ Ալէքսանդր I նրան նորից պաշտօնի է կոչում, օրէնքների մըշակման յանձնախմբի անդամ կարգում։ Այստեղ Ռադիշչեվը նորից յիշում է իր գաղափարները, սպառնալիք է լսում և չը կարողանալով տանել՝ ինքնասպանութիւն է գործում, խմում է սպիրտի և սապոնի ջրի խառնուրդը, որով որդին շորերն էր մաքրում։

Ռադիշչեվը լայն ժողովրդականութիւն չէ ստանում. նրա գլխաւոր շարադրութիւնը ցենզուրայի սեփականութիւն է դառնում և միայն 1905 թ. մի քանի հրատարակութեամբ լոյս է տեսնում, եթէ չը հաշուենք արտասահմանեան և 1868 թ. անօրինակ տպագրութիւնները։ Սակայն խիստ ցենզուրան չը նսեմացրեց Ռադիշչեվի նշանակութիւնը ռուսաց հասարակութեան տրամադրութեան վերաբերմամբ. յաջորդ սերունդի լաւագոյն անդամները՝ Պուշկին, Բէլինսկի և այլն Ռադիշչեվի գրքի ձեռագիրն են կարդացել և նրան են իրանց ուսուցիչ անուանել։ Համոզված ազատամիտ և լուրջ բարենորոգումների կողմնակից Ռադիշչեվը իր ժամանակի ծնունդը չէր ամբողջապէս. դա Եկատերինեան մակերեսային ազատամտութեան շրջանն էր, երբ արտաքին փայլն էր գերագոյն նպատակ, երբ հասարակութեան մէջ Ֆամուսովի և Մոլչալինի հայրերն էին թագաւորում. միջավայրին ու մօտենտին անհամապատասխան հայացքներ, կարեկցութիւն և առողջ բանականութիւն՝ համեմված անկեղծութեան հետ՝ թունաւորեցին Ռադիշչեվի անհատական կեանքը. այդ կեանքը ռուսաց գաղափարական մտաւորականութեան սիմվոլն է։ Անհատական թունաւորված բարեկեցութիւն մի սերունդ ոգեորեց և «հարիւր-գլխանի» կարիքի տապալումը արագացրեց։

Գ. Տէր-Ռուբէնեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ «Т. Л.»-ի ասելով՝ այս օրերս Թիֆլիսում սպասվում է Կովկասի Փոխարքայի ներկայացուցիչ սենատոր Նիկոլսկին։

✦ Երէկ կառավարական, կրթական և այլ հաստատութիւններում, ռուսաց Խաչվերաց տօնի պատճառով, զբաղմունքներ չեղան։ Ռուսերին լեզուով հրատարակվող օրաթերթերը յիշեալ տօնի պատճառով այսօր լոյս չը տեսան։

✦ Կովկասի Փոխարքային ներկայացաւ կովկասեան թանգարանի տեսուչ Կաշնակովը։

✦ Հոկտ. 1-ին Թիֆլիսում կայանալիք բամբակագործների համագումարին մասնակցելու համար երկրագործութեան դեպարտամենտը ուղարկում է մասնագետ Վ. Իւֆէրովին։

✦ Վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ դողերոցք հիւանդութիւնը (մալարիա) Կովկասում համարեա առաջին տեղն է գրաւում։ Հարկաւոր բժշկական մարմինների լուրջ ուշադրութիւնը պէտք է ուղղվեր այդ սաստիկ տարածվող հիւանդութեան դէմ նորանոր միջոցներ տեսնելու։ Ահա այդ իսկ նպատակով արտասահման ուղարկվեց Մէքայէլեան հիւանդանոցի գլխաւոր բժիշկ Վիլսիլաձէն, որ պաշտօն ունի ուսումնասիրելու այն միջոցները, որոնցով կռիւ են մղում մալարիայի դէմ Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և Հիւսիսային Աֆրիկայում։ Բժիշկը կը վերադառնայ մի տարուց յետոյ։

✦ Ժուժկալութեան ընկերութիւնը Նախալովկայում հիմնում է ժողովրդական տուն, որի համար քաղաքային վարչութիւնը ձրիաբար յատկացնում է 1500 քառ. սաժ. հողաբաժին։

✦ Այսօր և վաղը Մուշտայիդ այգում բարեգործական նպատակով կը լինի ձրի զբօսանք։

✦ Վաղը կը տօնվի «Кавказъ» օրաթերթի աշխատակից Գ. Պավլովի գործունէութեան 25-ամեակը։ Այդ օրը «Кавказъ»-ի խմբագրատանը տեղի կունենայ մաղթանք, որից յետոյ յօբելեարին կը շնորհաւորեն։ Ապա սերտ շրջանում կը լինի ճաշ ի պատիւ յօբելեարի։

✦ Այսօր Այխենվալդը իր երկրորդ դասախօսութիւնը կը նուիրէ Չեխովի գրուածքներին և կորակէ նրա նշանակութիւնը ռուս գրականութեան վերաբերմամբ։

✦ Սեպտ. 12-ին, Օլգինսկայա փող. մօտ, էլեքտրաքարշի վագոնը ընդհարվեց № 168 կառքին, որի մէջ նստած էր հանգուցեալ ինժենէրի այրի տ. Օրլովսկայան։ Ընդհարման ժամանակ կառքի առաջին մասը փչացաւ. տիկինը ստացաւ ծանր ջարդուածքներ և արիւնհոսութիւն ականջից։

✦ Այսօրվանից կը բացվի Արքունական թատրոնի օպերային ներկայացումների սեզօնը։ Կը խաղացվի ըստ տրադիցիայի Գլինկայի «Жизнь за Царя» օպերան ուժեղ անամբոլով։

✦ Դերասան Ս. Թորոսեան խնդրում է մեզ տպել, որ Բաքուում տ. Սիրանոյշի կազմած խմբի մէջ ինքը չը կայ։

✦ Ղարաքիլիսայից հեռագրում են. «Այսօր, սեպտ. 12-ին պրիստաւ Սուխորուկովը պահակների հետ Սարալ գիւղում հրացանաձգութեան բռնվեց յայտնի Բաղրի աւազակախմբի հետ։ Գիւղում բարձրացաւ իրարանցում. օգտվելով դրանից՝ աւազակները դուրս թռան իրանց գրաւած դիրքից և դիմեցին փախուստի։ Ճանապարհին նրանք սպանեցին երկու շինականի և վիրաւորեցին մի պահակի։ Գիւղի ետևում աւազակները մնան մի փոսի մէջ. պահակները հետեցին նրանց, և այդ ժամանակ աւազակներից մինը սպանվեց։ Հետապնդման ժամանակ Բաղրի կողմնակից գիւղացիք կրակ բացին պահակախմբի վրա։ Գիւղի ուղղութեամբ համազարկ պարպելուց յետոյ կրակողները ցիրուցան եղան։ Սպանված աւազակի մօտ գտնվեց մի հրացան և 200 փամփուշտ»։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—

✦ Վաղը տեղի կունենայ Թիֆլիսի ռուս նացիոնալիստների, նախընտրական ժողովը ռուսական կուրիայի կողմից պատուիրակներ մատնանշելու համար։

✦ Թիֆլիսի նահանգապետը քաղաքագլխին ուղարկեց այն կանոնները, որոնք մինչև որ իմացան, որ ռուսաց զօրքը պատրաստ ընթացքով հասել է Աշի-Էյ և Շուլա-ուզ-Դօվլէն ևս միանալով նրանց հետ՝ երկրորդ օրը պէտք է մտնեն քաղաքը և գրաւեն, ոմբակոծելով, անշուշտ, Սրքը։ Իմանալով այդ՝ Էմիր-Հիշմաթը և ֆէդայիները, գիշերով, մթութեան մէջ, իրանց միայն յայտնի մի գաղտնի ներքնուղիով փախչում են Սրքից։

— Ռուսները կամ Շուլա-ուզ-Դօվլէն կարողացան ձեռք ձգել Էմիր-Հիշմաթին։

— Ոչ. նա փախաւ և, ինչպէս ասում են, այժմ գտնվում է Կ. Պոլսում։

— Բայց դուք դեռ չասացիք ինձ, թէ ինչով վերջացաւ հայոց թաղի աղատութիւնը և Բաղը-Շիմալ այգուց ուղարկված ռուս զինուորները կարողացան ժամանակին օգնութեան հասնել, մինչև գլխաւոր զօրքի գալուստը Զուլֆայից։

— Զինուորները երկիւղ էին կրել գիշերը գալու, որովհետև ֆէդայիները բռնած լինելով բոլոր գլխաւոր ուղիները, բազարները, նրանք հեշտութեամբ կարող էին մոլորվել նեղ, ծուռ և խուլ փողոցներում և կոտորվել։ Նրանք ճանապարհ էին ընկել այդուց միւս օր, առաւօտեան շատ վաղ, գեռ լոյսը չը բացված. և որովհետև անծանօթ էին փողոցներին, որովհետև ձմեռ էր ու ցուրտ, քայլել են մեծ զգուշութեամբ, զանազան ոլոր մոլոր փողոցներով, կորցրել են ճանապարհը և հազիւ հասան մեր հայոց թաղը մօտ կէսօրին։ Նրանք հասան ցեխոտ և պատիկ քաղցած, որովհետև խուճապի ժամանակ իրանց հետ ուտելու ոչինչ չէին վերցրել։ Մանելով հայոց թաղը և հայերի մէջ, նրանց առաջին գործն եղաւ հաց խնդրել։ Հիւպատոսարանում ևս պաշար չը կար։ Եւ ահա հայերը, Համազասպ քահանայի առաջնորդութեամբ, ընկան մեզ տուն, հաւաքեցին մեծ քանակութեամբ հաց և պանիր և շտապեցին կերակրել քաղցած զօրքը։ Եւ ահա այդուց եկած այդ մօտ 200 զինուորները ազատեցին մեզ, պաշտպանեցին, մինչև մի քանի ժամանակից յետոյ վրա հասաւ Զուլֆայից արշաւող մեծ զօրախումբը և, մտնելով քաղաքը Շուլա-ուզ-Դօվլէի հետ միասին, ընդհանուր ուրախութիւն պատճառեց։ Ընդհանուր-հիւպատոս Մելիքը իմանալով հայերի վարմունքը՝ զօրքը կերակրելու մասին, առանձնապէս շնորհակալութիւն յայտնեց Համազասպ քահանային և առաջարկեց ռուսաց բարձր կառավարութեանը՝ պարգևատրել նրան։

— Իսկ ինչ էր անում ընդհանուր-նահանգապետ Շահզադէ Զիա-ուզ-Դօվլէն։

— Նա, անշուշտ, ֆէդայիների կողմնակից էր, ուստի նա ևս, հէնց որ իմացաւ, որ երկրորդ օրը ռուսաց զօրքի հետ քաղաք է մտնելու Շուլա-ուզ-Դօվլէն, փախաւ բէսամ մտաւ անգլիացոց հիւպատոսարանում։ Իսկ մի քանի ժամանակից յետոյ ինքնասպանութիւն գործեց, վախենալով որ կարող է վերջ ի վերջոյ ընկնել Շուլա-ուզ-Դօվլէի ձեռքը, թէև անգլիական կառավարութիւնը ամեն տեսակ ապահովացնում էր նրան, որ նրան ոչ մի վտանգ սպառնալ չէ կարող, քանի որ գտնվում է անգլիական դրօշակի ներքոյ։

— Ի՞նչ արաւ Թուրք և պարսիկ ժողովուրդը, երբ քաղաք մտան Շուլա-ուզ-Դօվլէն և ռուսաց զօրքը։

— Նա գլխաբաց ընդունեց Շուլա-ուզ-Դօվլէին, անմիջապէս գլոհ տալով աւերեց, քարուքանդ արեց անջուրմանի գեղեցիկ շինութիւնը, որովհետև անջուրմանը ֆէդայիների ձեռքումն էր, որոնք, ի հարկէ, փախուստ էին տուել, և շնորհակալութիւն յայտնեց ռուսաց զօրքին և Շուլա-ուզ-Դօվլէին հաչակեց ընդհանուր նահանգապետ Ատրպատականի ու իմացրեց այդ մասին Թէհրանի կենտրոնական կառավարութեան, որը, սակայն, չը հաստատեց այդ ընտրութիւնը, պաշտօնապէս չը ճանաչեց, բայց և չը համարձակվեց պաշտօնանկ անել նրան, քանի որ ոչ մի այժ չունէր։ Թաւրիզում այժմ գտնված միակ պարսիկ զինուորական այժը իրա Շուլա-ուզ-Դօվլէի 800 ապառազինեալ ձիաւորներն են։ Այդպիսով, Շուլա-ուզ-Դօվլէն, հակառակ Թէհրանի կառավարութեան, եղաւ Ատրպատականի ընդհանուր հրամանատար՝ թէ զինուորական և թէ քաղաքացիական մասի։ Եւ պէտք է ասել, որ նա արդարացրեց ժողովրդի յոյսերը։

— Ի՞նչպէս։

— Նա հաստատեց կարգ ժամանակամիջոցում կարգ և անդորրութիւն. հոգ տարաւ, որ կենսական մթերքների կողմից ժողովուրդը նեղութիւն չը կրէ. էժանացնել տուեց հացը, միսը, ածուխը, որովհետև վերացրեց, ջնջեց աւազակութիւնները ճանապարհների վրա։ Մունետիկ կանչել տուեց, որ այսուհետև ամեն մարդ՝ վաճառական, արհեստաւոր, բանուոր՝ իր գործին ու արհեստովը զբաղվէ ապահով կերպով։ Առևտուրը և վաճառականութիւնը վերսկսվեց. կեանքը մտաւ իր նորմալ պայմանների մէջ, և դուք ինքներդ կը տեսնէք, թէ այժմ որպիսի ազատութիւն և ապահովութիւն է տիրում փողոցներում, բազարներում։

— Ինչպէ՞ս կարողացաւ Շուլա-ուզ-Դօվլէն հաստատել այդպիսի կարգ և անդորրութիւն։

— Նա սկսեց անխնայ հալածել և պատժել, կախաղան բարձրացնելով, բոլոր այն անձանց, որոնք թէ իբրև միապետական, թէ իբրև սահմանադրական, կեղեքում և հարստահարում էին ժողովուրդը։ Եւ պէտք է ասել, որ նրա հրամանով մինչև այժմ պատժվածների մէջ չը կայ մինը, որից ժողովուրդը սոսկալի զրկանքներ և կեղեքումներ կրած չը լինէր։

— Ուրեմն, Շուլա-ուզ-Դօվլէն հեռաքբքրքրական անձնաւորութիւն է։

— Այո, խիստ հետաքրքրական, և մենք խորհուրդ կը տանք ձեզ աշխատել տեսակցել նրա հետ և անձամբ գաղափար կազմել։

Ես խնդրեցի իմ փեսայ Զ. Նազարբէկեանից, որ, իբրև թաշիր-բաշի և մօտ բարեկամ Ատրպատականի այդ՝ ժողովրդից ճանաչված, բայց պաշտօնապէս անճանաչված, ընդհանուր հրամանատարի, ունկնդրութիւն խնդրէ ինձ համար։

Ինձ մնում էր մի կէտ ևս լուսաբանել։

— Ասացէք, խնդրեմ, երբ ռուսաց զօրքը մտաւ քաղաքը, ինչ արեց։

— Անմիջապէս հաստատվեց զինուորական-դաշտային տաճան, քննելու և դատելու նրանց, որոնք ռուս զօրքի դէմ յարձակման դաւադրութեան ծրագիրն էին յղացել։ Զօրքը սաստիկ կատաղած էր, լսելով մասնաւոր այն վայրագ, անգութ տանջանքները, որոնց ենթարկվել էին մի քանի ռուս զինուորներ ֆէդայիների կողմից, և վրէժխնդրութիւն էր տենչում։ Այդ է պատճառ, որ դատարանը այնքան խստութեամբ վերաբերվեց մեղադրվածներին և կրօնապետ Սըգաթ-իւլ-Իսլամին, որ դաւադրութեան պետն էր հանդիսացել, ինչպէս և մեւս դաւադիրներին, կախաղան բարձրացրեց շէհների ամենանուիրական և սուգի օրը, աշուրէ օրը։

— Մահվան պատիժը դատապարտվածներին հրապարակով տրվեց։

— Այո, մեծ բազմութիւն էր հաւաքվել նոյնիսկ պարսիկներից. հայերից ևս շատերը գնացել էին։ Սըգաթ-իւլ-Իսլամը, երբ չուանը պարանոցն էր անցկացնում՝ կախելու համար, արտասանեց այս խօսքերը. «Ես խուր չեմ, որովհետև այսօր իսկ կը գնամ դրախտը, իսկ ռուսները կը գնան դժոխք»։

— Դաշնակցական Պետրոս-խանը պարսիկների հետ կախվեց։

— Ոչ, նա բաւական յետոյ կախվեց։ Նա ամենևին չէր հաւատում, որ իրան վտանգ է սպառնում, ասելով որ ինքն ոչ մի բան չէ արել ռուսների դէմ։ Սկզբում նա արձակ համարձակ գնում էր իր պաշտօնին։ Մի օր Շուլա-ուզ-Դօվլէն կանչել տուեց նրան. նա կարծեց, թէ պաշտօնին վերաբերեալ գործով է, գնաց և այնտեղ իսկ ռուսները կալանաւորեցին ու բերին հիւպատոսարան, որտեղից տարան զինուորական տաճանը ու մի քանի օրից յետոյ՝ կախաղան։ Ինչպէս յետոյ ասացին, նրան մատնել էր դաւադիրներից մէկը՝ Հաջի-Ալի անունով և յանձնել դատարանին թղթեր, որոնք անկասկած էին կացուցանում նրա և Ստեփանեանի մեղսակցութիւնը։

— Արդեօք միջնորդութիւններ չեղան, չը դիմվեց կայսերական գթութեան և ողորմութեան։

— Ինչպէս չէ. խեղճ ծնողները, կինը հեռագիրներով դիմեցին ամեն տեղ։ Հեռագիրներով միջնորդութիւն յարուցեց և առաջնորդ կարապետ եպիսկոպոսը, որ այդ միջոցին հասել էր էջմիածնից, բայց ամենը ի զուր անցաւ։ Եպիսկոպոսի յարուցած միջնորդութիւնները մի քիչ ձախող կերպով էին խմբագրված։ Իր հեռագիրների մէջ Կարապետ եպիսկոպոսը թոյլ էր տուել պնդել, թէ ինքն համոզված է Պետրոս-խանի անմեղութեան մէջ։ Եւ սակայն դատարանը ունէր ձեռքին անհերքելի փաստեր։ Անշուշտ, եպիսկոպոսը, իբրև հոգևոր հայր և հովիւ, քրիստոնէական սեղուն պարտականութիւն ունէր միջնորդելու, բայց միայն գթութեան և ողորմածութեան համար, այլ ոչ փաստաբանութեան, հիմնված սխալ տեղեկութիւնների վրա։ Դա ցոյց է տալիս Կարապետ եպիսկոպոսի մէջ դիպլոմատիական տակտի պակասութիւն։

Հ. Առաքելեան

Վրիպակ.—«Մշակի» № 203-ում տպված էր, որ «Բուդաղեանների յայնատարած այդու բոլոր ծառերը սղոցով կտրատել էին»։ Այդ սխալ է. կտրատել են ոչ թէ Բուդաղեաններին, այլ դարձեալ Արզումանեանների այգին։ Այս մասին կարող են վկայել իրանք Արզումանեանները և Զիբրայիլ Բուդաղեանը։

Հ. Ա.

վերաբերում են հրէաների Պատ. Դումայի ընտրութիւններին մասնակցելու իրաւունքին։ Քաղաքային վարչութիւնը այդ կանոնների առիթով յայտնեց նահանգապետի դիւանին, որ այդ հրահանգը անկարելի է գործադրել այժմ, քանի որ ընտրողական ցուցակները հրատարակված են արդէն օգոստոսի 8-ին և հաստատված են պաշտաօնական իշխանութեան կողմից։

✦ Ռուսաստանում ընդհանուր առմամբ գործում են նացիոնալիստական և հոգևորականութիւնը կուսակցութիւնները։ Առանձնապէս աշխատում է նաև հոգևորականութիւնը իր թեկնածուներին անցկացնելու համար։

✦ «Рѣчь»-ի ասելով, Պետերբուրգի ընտրողների ցուցակում մտած են բաւականին ոստիկաններ, նոյնիսկ հանգուցեալներից, որոնք ընտրողական իրաւունք չունեն։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ղազախ, 5 սեպտեմբերի

«Մշակի» № 188-ում պատահմամբ կարդացի կաթողիկոսական դիւանապետ հայր Բագրատ վարդապետի յայտարարութիւնը, որի մէջ է մի մի այլոց գրված է, որ ուսուցիչների լիակատար ցուցակի մէջ մտնելու համար պարտաւոր ենք մեր ուման վայրկանների պատճէնները ուղարկել Իրան և որ միայն այդ դէպքն անողները կարող են ապագայում ուսուցիչ համարվել։

Ասում եմ՝ պատահմամբ կարդացի, որովհետև միջոցներս սղութեան պատճառով լրագրի երես տեսնելուց զուրկ եմ հանապազ, և քանի քանի ինձ պէս դժբաղդներ կան, որոնք լրագիր չեն տեսնում, կամ կանոնաւոր չեն ստանում. ուրեմն մթթէ այդպիսիները պիտի ուսուցչական պաշտօնից ևս զրկվեն այդ յայտարարութեան մասին որպէս անտեղեակ, իրանց վկայականները չուղարկելու դէպքում։

Արդեօք լաւ չէր լինի, որ այդ մասին շրջաբերական գրութեամբ ծանուցվէր բոլորիս։ Գիւղական ուսուցիչ

Թ. ԹԱԴԷՈՍԵԱՆԻ ՄԻ ՆՈՐ ԽԱՐԴԱԽՈՒԹԻՆԸ

«Հօրիզոն» Վաղարշապատի թղթակից Թ. Թադէոսեան, որ քանիցս բռնվել է ստախօսութիւնների մէջ, նորից թոյլ է տուել իրան կատարել մի խարդախութիւն և կեղծիք «Հօրիզոն» № 201-ում։

Ինչպէս յայտնի է, նա վերջերս «Հօրիզոն» մէջ մի նամակ էր տպել, թէ «Մշակ» լրագրի մէջ տպված լուրը Օրմանեան սրբազանի առիթով—Կաթողիկոսի դիմումը պարիարքին—սուտ է։

«Մշակը» հակացրեց Թադէոսեան պարոնին, թէ այդ լուրը «Մշակը» և իր թղթակիցը չեն հնարել, այլ տպված է Կ. Պոլսի բոլոր հայ թերթերում, քաղված պատրիարքարանի տեղեկութիւններից։ Ուրեմն «Մշակը» այդտեղ ոչ մի դեր չէ խաղացել։ Եթէ լուրը սխալ է, հնարովի է, մեղաւորը «Մշակը» չէ, այլ Կ. Պոլսի հայ թերթերը և հայոց պատրիարքարանը, որ հաղորդել է այդ լուրը թերթերին։ Իսկ լուրը, ինչպէս հաղորդում է նաև «Баку» թերթը (տես № 207), տպված է եղել նոյնութեամբ «Բիւզանդիոն»ի, «Ժամանակ» և այլ լրագիրների մէջ։

Բայց, որ ամենից օտարոտին է և բնորոշ, այդ լուրը «Մշակից» առաջ տպված է եղել իրա «Հօրիզոն» թերթի մէջ (տես № 179, օգոստ. 18), քաղված թիւրքահայ թերթերից։ «Մշակը» մոռացել է նաև այդ գլխաւոր հանգամանքը կոխել Թ. Թադէոսեանի աչքը և ասել՝ եթէ սուտ է, ուրեմն առաջին ստախօսը «Հօրիզոն» է և զուր էք «Մշակին» մեղադրում։

Զը նայելով այս ակնայայտնի փաստերին, որ «Մշակը», նոյն իսկ այն դէպքում, եթէ ապացուցվեց, որ արդարև, Կաթողիկոսը Պալաքեան վարդապետի միջոցով՝ այդպիսի դիմումն չէ արել Արշանունի պատրիարքին Օրմանեանի մասին, և ուրեմն, Պալաքեան վարդապետը ինքն է հնարել հեռագիրը, ոչ մի մեղք չունի, քանի որ նա միայն երկրորդել կամ արտատպել է մի լուր, որ տպված է եղել «Հօրիզոնի» և Կ. Պոլսի հայ թերթերի մէջ, չը նայելով որ նաև եկիպտահայերի խնդրագրի մասին լուրը զարձեալ տպված է Կ. Պոլսի հայ թերթերի մէջ—բայց այնու ամենայնիւ Թ. Թադէոսեան կոչված անձը, մի բաց նամակ է տպել «Հօրիզոնի» մէջ, ուղղված դիւանապետ Բագրատ վարդապետին։ Այդ նամակի մէջ նա հետևեալ խարդախ զարձուածքն է գործ ածում. «Որովհետև «Մշակ» լրագիրը փորձեր է անում յօրինել կաթողիկոսական այնպիսի կարգադրութիւններ, որոնք իսկապէս տեղի չեն ունեցել», ուստի խընդրում է հերքել։ Փոքր ի շատէ օրինաւոր, խիղճ ունեցող, կօրրեկտ մարդը այսպէս կը գրէր. «Հայր սուրբ, որովհետև «Բիւզանդիոն», «Ժամանակ», «Հօրիզոն» և «Մշակ» թերթերի մէջ երևացել է մի այսպիսի լուր, թէ իբր Կաթողիկոսը Պալաքեան վարդապետի միջոցով մի կարգադրութիւն է արել Օրմանեան սրբազանի մասին, ուստի հաճեցէք յայտնել ճիշդ է թէ ոչ»։

Դուրս է գալիս ըստ անբարեխիղճ Թ. Թադէոսեանի լոգիկայի, որ եթէ մի լուր գրված է «Հօրիզոնի» մէջ՝ ճիշդ է, իսկ եթէ նոյն լուրը գրված է «Մշակի» մէջ՝ սուտ է։

Եւ այսպիսի մարդիկ երես ունեն, հաւատակվում են գրել ձեռք առնել և ուրիշներին՝ բաց նամակներ գրել։

Մի ընթերցող

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Ռուսաց և անգլիական արտաքին գործերի մինիստրներ Սազոնովը և Գրէյը, ինչպէս հեռագրում են Կ. Պոլսից, եռանդուն առաջադրութիւն արին Բ. Դրան, թէ անհրաժեշտ է անմիջապէս լայն բարենորոգումներ գործադրել Բալկանի խաղաղութիւնը պահպանելու նպատակով։ Մերժման դէպքում եռապետական համաձայնութեան պետութիւնները ակտիվ մասնակցութիւն են ցոյց տալու թիւրքահպատակ քրիստոնեաների վիճակում։

✦ Ամբողջ Ցունաստանում տեղի են ունենում տենդային պատերազմական պատրաստութիւններ։ Ցերեկներն ու գիշերները սահմանները լցվում են զօրքերով։

✦ Թիւրք-բոլգարական սահմանագլխում ամեն օր տեղի են ունենում փոքր և մեծ ընդհարումներ թիւրք և բոլգար պահակախմբերի միջև։ Վերջերս նախայարձակ են լինում թիւրքերը։

✦ Ռուս դիպլոմատների յայտնելով վերջին օրերս դրութիւնը Բալկանում վատթարացել է։

✦ Պարսկաստանի բաժանման լուրը հերքվում է։ Սակայն խօսում են, որ Անգլիան աշխատելու է Թէհրանը հանել ռուսական ազդեցութեան շրջանից։ Միևնոյն ժամանակ Անգլիան յոյս ունի ստանալ Ռուսաստանի համաձայնութիւնը, որ պարսկական փոխառութիւնը կնքվի միմիայն Լօնդոնում։ Այս դէպքում պարսից խնամակալն էլ կը վերադառնայ Պարսկաստան։

✦ Թէհրանում դաշնակցականները կառավարութիւնից պահանջում են անյապաղ միջոցներ ձեռք առնել գումարելու մէջլիսը։

✦ Տօկիօյից հեռագրում են. «Նօգիի և նրա կնոջ թաղումը կրում էր չափազանց հանդիսաւոր ընաւորութիւն։ Ներկայ էին բոլոր նշանաւոր պաշտօնեաները, դիպլոմատներ, օֆիցերներ, բոլոր զօրքերից ներկայացուցիչներ և բոլոր նահանգներից պատգամաւորութիւններ։ Սգերթը բացեց պալատական գունդը. յետոյ գալիս էին Պօրտ Արթուրի գերբով վեստերանները՝ ձեռքներին սգի ճիւղեր բռնած։ Դագաղը դրվեց դիակառքի վրա, որ քաշում էին 50 զինուոր։ Դագաղի վրա դրված էին հանգուցեալի գլխարկը և թուրը։ Դագաղի ետևից օֆիցերները բարձերի վրա տանում էին գեներալի բազմաթիւ շքանշանները։ Ապա բերում էին գեներալի սրված երեք ձիերին սև շորով ծածկած։ Սրանց ետևից գալիս էր տիկին Նօգիի դիակառքը։ Գերեզմանատանը սպասում էր խորին լռութեան մէջ բիւրաւոր բազմութիւն։ Պատշաճ արարողութիւնից յետոյ պրինց Կոնաուտսկին, պրինց Ֆուշիմին և միւս եռապնացի պրինցները դագաղների վրա դրին սգի ճիւղեր, և թնդանօթների պարպումով ամիրները յանձնվեցին հողին»։

✦ Խայլարից հեռագրում են, որ տեղատի ժողովում վճռվեց անյապաղ Խայլարին մօտեցնել մօնգոլական զօրքերը և Ռուսաստան պատգամաւորութիւն ուղարկել օգնութիւն խնդրելու։ Որոշվեց տեղեկացնել նաև խուտուխտային, որ չինական զօրքերն արդէն մօտեցել են Մօնգոլիային։

✦ Հաղորդում են, որ Սախալինը վերստին դառնալու է աքսորավայր, որովհետև Սիբիրի բանտերը արդէն լիքն են։

✦ Ռուսաց սինոդի պրոկուրոր Սաբլերը կարգադրեց վերացնել Դէրմօգէն եպիսկոպոսի բանտարկութիւնը և մտադիր է տալ նրան բարձր պաշտօն։

✦ «Пр. Вѣстн.»-ի եկամուտները կազմում են 463,000 բուբլի, իսկ ծախքերը—287,000 ր.։ «Տեղեկատու Բիւրոյի» ծախքերն են 100,000 ր., եկամուտները՝ 23,000 ր.։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

13 սեպտեմբերի

ԲՈՍՏՕՆ։ Առևտրական պալատների միջազգային կօնգրէսը միաձայն կարծիք յայտնեց յօգուտ բանկային չեկերի միանման օրէնսդրութիւն ունենալու։

ՍԱՆ-ՍԵԲԱՍՏԻԱՆ։ Մի քանի օր մանրամասնօրէն նայելուց և աւտօմօբիլային մրցումը մասնակցողների մեքենաները ստուգելուց յետոյ՝ 104 մեքենաներից մրցանակը տրվեց ռուս Նագէլի բալտիական աւտոմօբիլին. բացի դրանից տրվեց 6000 ֆրանկ դրամական պարգև։ Ի պատիւ ռուսների սաբքվեց մեծ խնճոյք։

ՊԵՐՄ։ Լունէվիլ երկաթուղայծի մօտերը անտառները այրվում են։ հրդեհը սպառնում է քարածխային հանքերին։

ԿԻԵՎ։ Դուման որոշեց 35 միլիոնի փոխառութիւն կնքել էլեքտրաքարշը և էլեքտրական ձեռնարկութիւնները գնելու համար։

ՎԻԵՆՆԱ։ Պարմի եօթնամեայ պրինց կալը վախճանվեց երեխաների կամաւորից։

ԱԼՄԷՐԻԱ։ Գործադուլ արին Հարաւային Սպանիայի երկաթուղային ծառայողները։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ։ Ոստիկանապետի նախկին օգնական Գոլովկօն կեղծ զրամներ սպառելուն համար դատապարտվեց չորս տարով բանտարկութեան։ Գործը տեսց 3 օր։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թէրէքի շրջանի կառավարիչ գ. լ. Միխէևվին հրամայվեց ներկայանել սենատում. հանքային ինժենէր Արանզաբէնկոյին՝ կատարել հանքային դեպարտամենտի վերատեսչի պաշտօնը։

Մինիստրների խորհուրդը ընդունեց օրէնսդրական հաստատութիւններին ներկայացնելու համար զինուորական մինիստրութեան նախահաշիւը։

«Լերէդ» աէրօստատով կապիտան Շեվաբսկին օֆիցէրների հետ թռիչքներ կատարեց Պետերբուրգի շրջակայքում 2½ ժամ։

Խմբագիր՝ Հ. Ա. ՌԱՖԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ը. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՖԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Высочайше Утвержденное Русское Общество Пароходства и Торговли, учрежд. въ 1856 г.

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

Ամբարձին երթևեկութիւն

ՂՐԻՄ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԾ

Մեկնում են Բաթումից

I Պօստային-մարդատար օգնեցաւերը.
Երեքշաբթի ժամի 1-ին գիշերը, շրջանակի գծով
Հինգշաբթի » 1 » » »
Շաբաթ » 12 » ուղղակի »

II Մարդատար օգնեցաւերը.
Երկուշաբթի ժամի 2-ին ցերեկը, շրջանակի գծով
Շաբաթ » 2 » » »

III Մարդատար-ապրանքակիր օգնեցաւերը.
Երեքշաբթի կէս գիշերին, շրջանակի գծով.
Ուրբաթ » » » »

Ժամերը Պետերբուրգի են։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՊՕՏԱՑԻՆ ԳԻԾ

Կանոնաւոր հաղորդակցութիւն դէպի Ալէքսանդրիայի բիւրեղապալի, Մակրօնիայի, Սերբիայի, Անատօլիայի, Պարսից-Ծոցի (Персидскій заливъ) գծերի բոլոր նաւահանգիստները։

ԲԱԼՏԻԿԱՍ ԳԻԾ

Կանոնաւոր հաղորդակցութիւն ուղղակի Պետերբուրգ-Ռիգա, Լիբաւա և Բէվել։

Տոմսակները կարելի է գնել Թիֆլիսի գրասենեակում Վլադիմիրսկայա փողոց, № 18.

Հեռախօս № 11.

Ընդունվում են եւ ապահովացվում են ապրանքներ ծեռնտու պայմաններով։

Գործակալ՝ Ս. Խ. Սուլթանեանց

(չ.) 0—62

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ՊԱՐՈՆ,

որ երկար տարիներ ապրել է Պարիզում, հիմա է ֆրանսերէն լեզուին ու տիրապետում է լեզուի գեղեցիկ առգաստութեան՝ ցանկանում է ֆրանսերէնի դասեր տալ։ Հարցնել «Մշակի» խմբագրատանը։

691. 2—1

Наша Азбука

Иллюстрированная оригинальными рисунками изъ кавказской жизни и приспособлена для кавказскихъ школъ.

Составили В. С. и Ш. Х.

Цѣна 30 коп.

Դիմել Թիֆլիսի բոլոր գրավաճառներին։

(չ. շ.) 620. 10—7

Բոլոր ԳՐԱԽԱՆՈՒԹԵՐՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ՍԱՀԱԿ ԱԻ.-ՔԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆԻ

աշխատասիրած կրօնի դասագրքերը։

	գինն է
I. Ուսուցիչների համար	
Ստորին շրջան	ր. կ.
1) Ուղեցոյց Հին-Ուխտի, մասն Ա.	» 80
2) Ուղեցոյց Հին-Ուխտի, մասն Բ.	» 85
3) Ուղեցոյց Նոր-Ուխտի, մասն Ա.	1 »
4) Ուղեցոյց Նոր-Ուխտի, մասն Բ.	1 5
Միջին շրջան.	
5) Դասագիրք կրօնի, հատոր Դ.	1 50
6) Դասագիրք կրօնի, հատոր Ե.	» 50
7) Տասն պատուիրան	» 50
II. Աշակերտների համար	
ա) Ծխական դպրոցների համար	
8) Դասատետր կրօնի, Ա. տարի	25
9) Դասատետր կրօնի, Բ. տարի	25
10) Դասատետր կրօնի, Գ. տարի	25
11) Դասատետր կրօնի, Դ. տարի	30
բ) Պետական դպրոցների համար	
12) Դասատետր կրօնի, Ա. տարի	25
13) Դասատետր կրօնի, Բ. տարի	25
14) Դասատետր կրօնի, Գ. տարի (ոչ պատկերազարդ)	30
գ) Ծխ. և պետ. դպրոցների համար	
15) Հին-Ուխտ	50
16) Նոր-Ուխտ	45
17) Գործք-Առաքելոց	45
դ) Թիւրքահայ դպրոցն. համար	
18) Հին-Ուխտ	45
19) Նոր-Ուխտ	45
20) Բարոյախօսութիւն (էթիկա)	50
21) Մի քանի խօսք հայ կրօնուսոյցներին	10

Պատկերազարդ

Պահեստը «ԳԻՐ» գրավաճառանոցում։

Հեղինակի հասցէն՝ Бебутовская, 20.

(չ. շ.) 637. 5—5

ՅԻՍԱՆԴՆԵՐ,

ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾԻՔՆԵՐԻՑ!

Երևան են եկել մեր Սպէրմինի սակաւարժէք նմանողութիւնները, որոնք ըստ ապրեցութեան ոչ մի առնչութիւն չունեն մերինի հետ, և դեռ յաճախ նրանք պարունակում են իրանց մէջ առողջութեան համար վնասակար նիւթեր։

Նեվրասթենիայի, սեռական թուլութեան, զառամութեան, խստէրիկայի, նեվրալգիայի, սակաւարիւնութեան, բոբախութի, սիֆիլիսի, սնդիկային բժշկութեան հետեւանքների, սրտի հիւանդութիւնների (շաղութիւն, սրտի պնդախտութիւն, սրտի բարախտուն, պէրէբոյ, միօկարդիտ), զարկերակի կարծրացումի, ալկոհոլիզմի, ողնուծարի հիւանդութեան, կաթուածների, հիւանդութիւններից առաջացած թուլութեան, յոգնածութեան և այլ հիւանդութիւնների ժամանակ միայն Սպէրմին-Պէլի գործածութեամբ կարելի է հասնել այն փայլուն հետևանքներին, որոնց մասին վկայում են ամբողջ աշխարհի յայտնի գիտնականների և բժիշկների դիտութիւնները։ Հարկաւոր է ուշադրութիւն դարձնել

ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ

անուան վրա և հեռու մնալ զանազան անուններով երևան եկող բոլոր մահամերից և հեղուկներից, որոնց սակաւարժէք. համարհրատ. ունենք առանձին բրօշիւր, որն ուղ. է գրի՝ ՍՊԷՐՄԻՆի մասին եղած նոր գրական. հետ միասին։



(Ц. 1089б3) 12—?

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, սեպտ. 16 ին, առաւօտեան ժամը 11½-ին, Քամոյեան ս. Գէորգ եկեղեցում նշանակված է ծխական տարեկան ընդհանուր ժողով։

ՕՐԱԿԱՐԳ.

1) 1912 թ. նախահաշիւի քննութիւն ու հաստատումը։
2) Առաքելական խնդիրը։
3) Երէցփոխի ընտրութիւն պ. Ե. Ե. Քալանթարեանի հրաժարման պատճառով, մի հոգաբարձուի ընտրութիւն՝ տիկ. Եղ. Արծրունու ժամանակամիջոցը լրանալու պատճառով։
4) Վերատուգիչ Ծանձնաժողովի երեք անդամների ընտրութիւն։

Քամոյեան ս. Գէորգ եկեղեցու

Հոգաբարձութիւն

Ծանօթ.—Եթէ այս ժողովը չը կայանայ, երկրորդ ժողովը կը նշանակվի հետեւեալ կիրակի, ամսոյ 23 ին, նոյն տեղում և նոյն ժամին։

690. 2—1

Լ. ՈՅՍ ՏԵՍԱԾ

ՀՐ. ՖԱԼԵԱՆ

ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

(Պատմուածք)

Գինն է 30 կոպ.

Նոյն հեղինակի

ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

(Պատմուածք)

Գինն է 15 կոպ.

Դիմել գրավաճառներին։

(օ.մ.) 667. 8—4

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Լ. ՏՕԼՍՏՕՅԻ հետեւեալ երկերը.

1) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, թարգմ. Սուրբիթեանի . . . . 30 կ.
2) ԿՈՆՏՈՒՑԻՈՍ (Զինական խմբաւորումը), խմբագրութեամբ Լ. Ն. Տոլստոյի, կազմեց Ա. Բուլանժէ, թարգմ. Սուրբիթեանի 7 կ.
3) ԱՍՍԱՑՈՒԱԾՆԵՐ ՄԱՀՈՒՄԷՆԻ, ընտրված Լ. Տոլստոյից, թարգ. Լ. Դանիէլեանի . . . . 5 կ.
4) ՔՈՑՐԵՐԸ, թարգ. Լ. Դանիէլեանի 5 կ.
5) ԻՆՉՈՎ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻՆ, թարգմ. Լ. Դանիէլեանի . . 10 կ.

Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 10% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիրը վճարով պահանջողներին զեղչ չէ լինի։

Հասցէն՝ Ред. газ. „Мшакъ", Тифлисъ.

(2) 10—1

Բոլոր գրախանութներում վաճառվում են

ԱՐՏԱՇԵՍ ԱԲԵՂԵԱՆԻ

փոխադրած և կազմած (ըստ Իվանովի, Կրուբերի և ուր.)

ԱԹԼԵՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

Բազմաթիւ նկարներով և դիագրամներով

1 ին մաս, 4-րդ և մասամբ 3-րդ տարվայ դասընթաց. նոր լոյս տեսաւ երրորդ տպագրութիւնը. գինը՝ 60 կ.։ 2-րդ մաս, 5-րդ տարվայ դասընթաց. գինը՝ 65 կ.։ 3 րդ մաս 6-դ տարվայ դասընթաց, գինը 70 կ.։ Նոյնի՝ «Հայրենագիտութեան ուսուցումը» . . . . 20 կ.։

Պահեստը՝ Թիֆլիս, «ԳԻՐ» գրախանութում։

(Ա. հ. շ.) 671. 3—3

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ

Առևտրական Գիտութիւնների Կուրսերում

Նոր մեթոդով սովորեցվում են

ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ

ապահ կարդալ, գրել և խօսել կարճ ժամանակվայ ընթացքում տեսական և գործնական պարապմունքների միջոցով, հանրամատչելի վճարով։ Դասակերպվում են հասակաւորներից երեկոյան խմբեր։ Ցաստատական Դասընթացքներ արտասահման գնալ ցանկացողների համար։ Մանրամասն տեղեկութիւնները և ընդունելութիւնները կուրսերի գրասենեակում—ամեն օր ժամը 10-12-ը և 4—7-ը։ Միխայլովսկի պլ. № 24-4.

(ա.օ.) 643. 0—10

ՆԻԿ. ՍԱՐԳՍԵԱՆ

ԴԱՍԱԳԻՐՔ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

երեք կամ չորս տարվայ դասընթաց ունեցող միդասեան դպրոց համար

(Մարդ, կենդանիներ, բոյսեր, օդ, ջուր եւ երկիր)

Համաձայն ծրագրի, բազմաթիւ պատկերներով, գինը 50 կոպ.

ԴԱՍԱԳԻՐՔ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

հինգ կամ վեց տարվայ դասընթաց ունեցող երկդասեան դպրոց համար

Մասն I ՄԱՐԴ և ԿԵՆԴԱՆԻ, Բ. բարեփոխած տպ. գինը 60 կ.
» II ԲՈՅՍ » » » 50 կ.

Բոլոր դասագրքերն էլ կազմված են կենսաբանական ուղղութեամբ։

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՆԱԵՒ

1) «Կենդանիների գոյները», գինը 15 կ., 2) «Թէ ինչպէս են տարածվում սերմերը», գ. 20 կ., 3) «Թէ ինչու համար է ծաղիկը», գ. 20 կ., 4) Վիրիէվ Բօէլրէ, «Մարդու ծագումը», թարգմ. գերմաներէնից՝ գ. 40 կ.։

Դիմել գրավաճառներին։

(օ.մ.) 645. 10—6

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Ս. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ եւ Մ. ՉԱՌԱՓԵԱՆ Ի կազմած

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔԸ

(պատկերներով եւ քարտէզներով)։

ԳԻՆՆ Է 75 ԿՈՊ.

Գիրքը կազմված է ըստ ռուսական և ֆրանսիական նորագոյն դասագրքերի, յարմարեցրած յատկապէս ծխական դպրոցների ծրագրին։ Շուտով լոյս կը տեսնի գրքի II մասը։ VI դաս. դասընթացը։ Պահեստը գտնվում է Թիֆլիսի «ԳԻՐ» գրախանութում և կազմողների մօտ՝ Баку, Армянское училище.

(օ.մ.) 8—6

Торговая школа съ правами и

БУХГАЛТЕРСКІЕ КУРСЫ

съ программами С.-Петерб. высшихъ Коммерч. Курсовъ О-ва распр. ком. знаній Ивана Захарьевича ТЕРЪ-СТЕПАНОВА.

Начало занятій съ 15 сентября ✦ Михайловскій пр. д. № 53.

(о.м.) 669. 5—4

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный